	контроль	АКЭ	АКЭ/ <i>E. coli</i>
Гомогенат	4.7 ± 1.8	191.1 ± 29.7***	40.7 ± 9.0***
Цитоплазма	16.7 ± 3.4	431.6 ± 44.3***	181.4 ± 27.5**
Митохондрии	13.5 ± 2.3	209.1 ± 30.6***	168.3 ± 25.2*
<b>Клетки АКЭ</b>		14.8 ± 3.5	22.4 ± 4.1*

*Примечание.* Здесь и в последующих таблицах результаты представлены в виде  $M \pm SEM$ ,  $n=18$ , достоверность ( $p$ ) различий результатов, оцениваемых при АКЭ, определялась по сравнению с контрольными значениями, а результатов, полученных при *E. coli*-обработке, – по сравнению с таковыми для неинфицированных мышей-опухоленосителей. Достоверность представлена обозначениями: #  $p>0.05$ , \*  $p<0.05$ , \*\*  $p<0.01$ , \*\*\*  $p <0.001$ . Постдисперсионный анализ Холм-Сидака при сравнении всех групп: а) перитонеальные лейкоциты: гомогенат –  $F=13.8$ ,  $p<0.001$ , цитоплазма –  $F=59.3$ ,  $p<0.001$ , митохондрии –  $F=16.1$ ,  $p<0.001$ ; клетки АКЭ:  $t=-0.74$ ,  $p=0.46$ ; б) перитонеальные лейкоциты: гомогенат –  $F=29.2$ ,  $p<0.001$ , цитоплазма –  $F=48.0$ ,  $p<0.001$ , митохондрии –  $F=20.3$ ,  $p<0.001$ ; клетки АКЭ:  $t=-2.95$ ,  $p=0.006$

Как видно из табл. 1, при АКЭ содержание МДА повышается в главных клеточных компартментах перитонеальных лейкоцитов в 7.8, 41.1 и 11.3 раза в гомогенатах, цитоплазме и митохондриях соответственно также, как и образование *in vitro* МДА в модельной системе неферментативного ПОЛ, уровень которого возрастает в 40.7, 25.8 и 15.5 раза, а в гомогенатах, цитоплазме и митохондриях соответственно по сравнению с контролем. В развитие оксидативного стресса при АКЭ вносят свой вклад стимулирование СРО и подавление функционирования АОС, обусловленное конформационными перестройками антиоксидантных ферментов, вызванных АФК или продуктами липопероксидации, которые уменьшают сродство ферментов к субстрату и кофактору. Продукция АФК опухолевыми клетками и выброс их во внеклеточное пространство также способствуют активированию ПОЛ во всех клетках, взвешенных в асцитной жидкости. При этом в стационарной фазе развития АКЭ в самих опухолевых клетках повышается активность ферментов утилизации АФК и липидных пероксидов, что связано с необходимостью убрать радикал кислорода, как один из пролиферативных стимулов [10].

Высокая активность АОС в клетках АКЭ подтверждается детектируемом в них относительно низким уровнем МДА и его аскорбатзависимого образования *in vitro*, которые в 2 и 12.9 раза ниже соответственно, по сравнению с гомогенатами перитонеальных лейкоцитов. Высокая активность антиоксидантных ферментов в опухолевых клетках является одной из причин их устойчивости к оксидативному стрессу и может служить фактором развития резистентности опухолей к терапевтическим воздействиям, в основе которых лежит свободнорадикальный механизм [27].

*E. coli*-обработка подавляет СРО в перитонеальных лейкоцитах, на что указывает снижение содержания МДА в 1.9, 3.2 и 1.8 раза и его синтеза *in vitro* в 4.7, 2.4 и 1.2 раза в гомогенатах, цитоплазме и митохондриях соответственно, по сравнению с мышами-опухоленосителями. Обработка кишечной палочкой, активируя АОС и подавляя СРО, препятствует иммуносупрессии и ПОЛ-индуцированным разрушительным процессам, характерным для канцерогенеза. Благодаря положительному влиянию бактериальной обработки, функциональная активность лейкоцитов повышается. Это проявляется и в возрастании процессов ПОЛ в клетках АКЭ, в которых вдвое увеличивается образование МДА *in vitro*. Отметим, что процессы ПОЛ вызывают образование липидных рафтов (микродоменов) как в бислойных липидных мембранах, так и в нативных клеточных мембранах [15]. Кластеризация опухолевых клеток липидными рафтами снижает их резистентность к лигандиндуцированному апоптозу и является возможной альтернативой для эффективной стратегии элиминации опухолевых клеток [30].

Одним из механизмов подавления АКЭ-индуцированных процессов СРО при бактериальной обработке может быть антиоксидантная активность полиаминов самой *E. coli*. Эксперименты *in vitro* выявили способность полиаминов перехватывать АФК, что подтверждается данными о повышенном содержании супероксид аниона в клетках *E. coli*, дефектных по синтезу полиаминов [11]. Дефектные штаммы отличаются от диких пониженным уровнем активности *soxS* регулона, обеспечивающего индукцию кислородпротекторных механизмов, и антиоксидантная активность полиаминов складывается из перехвата радикалов и активирования транскрипции протекторных белков, за счет взаимодействия полиаминов с ДНК [12]. Авторы показали, что первый механизм работает при слабых уровнях свободнорадикальной атаки, а второй – включается при собственно окислительном стрессе, что, по-видимому, имеет место при АКЭ. Отметим, что у мышей и пациентов с раком ингибирование продукции АФК иммунными клетками аннулирует их супрессорное действие [25].

Следует отметить, что при АКЭ наблюдается сверхэкспрессия индуцибелльной синтазы оксида азота (iNOS) и гиперпродукция NO иммунными клетками [26]. Нами также сообщалось о повышении более чем вдвое тотальной активности NOS в цитоплазме и митохондриях перitoneальных лейкоцитов мышей с АКЭ [1]. iNOS/NO вызывает элиминацию кишечной палочки и нарушает микробиоту [19]. *E. coli* вырабатывает ряд необходимых для человека витаминов: B1, B2, B3, B5, B6, B9, B12, K, оказывает влияние на обмен холестерина, билирубина, холина, желчных и жирных кислот, всасывание железа и кальция в ЖКТ мlekопитающих и является основным конкурентом по заселению кишечника условнопатогенной микрофлорой, кроме того, она поддерживает жизнедеятельность индигенной микрофлоры, забирая из просвета кишечника кислород, который вреден для строго анаэробных полезных бифидо- и лактобактерий [22]. Ранняя колонизация кишечника непатогенными штаммами *E.coli* стимулирует иммунную систему слизистой оболочки – выработку специфических антител и неспецифических секреторных иммуноглобулинов [32]. АКЭ-индуцированное активирование нитрергического ответа будет угнетать рост *E. coli* в ЖКТ, и введение бактерии позволит противостоять такому воздействию, способствуя восстановлению микробиома, сохранению целостности слизистой кишечника и активируя механизмы иммунной защиты, которые нарушаются при канцерогенезе.

Антиоксидантное действие *E. coli* проявляется и в крови, в которой процессы ПОЛ подавляются после бактериальной обработки (табл. 2). При АКЭ в лейкоцитах крови возрастают показатели уровня МДА в 5.8, 7.2 и 5.1 раза и образования *in vitro* МДА в 13.2, 17 и 40 раз в гомогенатах, цитоплазме и митохондриях соответственно, по сравнению с контролем. В плазме крови содержание МДА и его образование *in vitro* также по-

вышаются в 4.6 и 2.9 раза соответственно, по сравнению со здоровыми животными. Примечательно, что в лейкоцитах крови активирование процессов ПОЛ менее выражено, по сравнению с перитонеальными лейкоцитами, которые локализованы в асцитной жидкости и непосредственно контактируют с клетками АКЭ.

*E. coli* снижает уровень МДА в субклеточных фракциях лейкоцитов крови и плазме. Еще большее подавление ПОЛ проявляется в отношении образования *in vitro* МДА, которое снижается в гомогенатах, цитоплазме и митохондриях лейкоцитов крови в 2.2, 2.3 и 11 раз соответственно и в плазме в 6.6 раза, по сравнению с больными животными. В митохондриях лейкоцитов *E. coli*-обработка нормализует процессы ПОЛ. Одновременно в плазме содержание МДА снижается примерно в 1.5 раза, а образование *in vitro* МДА падает вдвое ниже контрольных значений.

*Таблица 2*  
*Влияние E. coli на перекисное окисление липидов в крови мышей при асцитной карциноме Эрлиха (АКЭ)*

<b>Лейкоциты крови</b>	а) пмоль МДА /мг белка		
	контроль	АКЭ	АКЭ/ <i>E. coli</i>
Гомогенат	56.0 ± 11.5	323.6 ± 36.4***	247.7 ± 32.7*
Цитоплазма	46.5 ± 9.8	333.4 ± 35.8***	187.7 ± 25.8*
Митохондрии	52.9 ± 10.3	271.3 ± 26.2***	96.6 ± 13.7***
<b>Плазма</b>	85.3 ± 14.2	391.8 ± 42.9***	266.2 ± 29.6**
<b>Лейкоциты крови</b>	б) пмоль МДА /мг белка/ч		
	контроль	АКЭ	АКЭ/ <i>E. coli</i>
Гомогенат	33.6 ± 9.9	443.8 ± 48.2***	200.4 ± 24.7***
Цитоплазма	14.9 ± 3.4	252.5 ± 38.9***	111.6 ± 17.6**
Митохондрии	3.7 ± 1.2	147.7 ± 24.8***	13.3 ± 3.6***
<b>Плазма</b>	5.6 ± 1.4	16.4 ± 4.5**	2.5 ± 1.5***

*Примечание.* Постдисперсионный анализ Холм-Сидака при сравнении всех групп: а) лейкоциты крови: гомогенат – F=26.9, p<0.001, цитоплазма – F=30.2, p<0.001, митохондрии – F=40.9, p<0.001; плазма: F=24.4, p<0.001; б) лейкоциты крови: гомогенат – F=42.1, p<0.001, цитоплазма – F=23.4, p<0.001, митохондрии – F=30.9, p<0.001; плазма: F=6.53, p=0.003.

Таблица 3

*Влияние E. coli на перекисное окисление липидов в головном мозге мышей при асцитной карциноме Эрлиха (АКЭ)*

Головной мозг	а) пмоль МДА/мг белка		
	контроль	АКЭ	АКЭ/E. coli
Гомогенат	50.8 ± 7.5	113.1 ± 16.4**	108.4 ± 15.7#
Цитоплазма	110.8± 11.8	289.9± 32.8***	148.8± 17.3***
Митохондрии	49.9 ± 8.3	183.3± 24.2***	124.3 ± 12.9*
Головной мозг	б) пмоль МДА/мг белка/ч		
	контроль	АКЭ	АКЭ/E. coli
Гомогенат	41.5 ± 15.4	225.1 ± 26.9***	174.0 ± 23.4#
Цитоплазма	34.5 ± 10.6	314.0 ± 34.7***	229.9 ± 22.6*
Митохондрии	59.7 ± 13.2	287.4 ± 31.3***	218.2 ± 24.9*

*Примечание.* Постдисперсионный анализ Холм-Сидака при сравнении всех групп: а) ткани головного мозга: гомогенат – F=6.3, p=0.004, цитоплазма – F=17.6, p<0.001, митохондрии – F=16.3, p<0.001; б) ткани головного мозга: гомогенат – F=17.9, p<0.001, цитоплазма – F=33.8, p<0.001; митохондрии – F=23.0, p<0.001

Нарушение взаимодействия между кишечником, ее микрофлорой и нервной системой характерно для патофизиологии заболеваний ЖКТ [28]. Ранее нами было показано, что у мышей с АКЭ в мозговой ткани наблюдается очаговая пролиферация нейроцитов и мелкие очаги межуточного отека [2]. При этом в тканях головного мозга возрастает содержание МДА в 2.2, 2.6 и 3.7 раза и образование *in vitro* МДА в 5.4, 9.1 и 4.8 раза в гомогентах, цитоплазме и митохондриях соответственно, по сравнению с контрольными значениями.

*E. coli*-обработка снижает уровень МДА в 1.95 и 1.45 раза и его образование *in vitro* 1.37 и 1.32 раза в цитоплазме и митохондриях клеток мозга соответственно, по сравнению с неинфицированными мышами-опухоленосителями. При АКЭ возрастание окислительных реакций в головном мозге менее выражено по сравнению с лейкоцитами крови и брюшной полости, и бактериальная обработка оказывает меньшее антиоксидантное действие, не проявляясь в гомогентах, что, возможно, обусловлено высоким содержанием ненасыщенных жирных кислот в мембранах нервных клеток, которые вовлекаются в процессы ПОЛ и маскируют ингибирующий эффект *E. coli*.

В условиях окислительного стресса накопление продуктов ПОЛ в мембранах нервных клеток приводит к нарушению ионного гомеостаза с последующим развитием эксайтотоксичности и их гибели [13]. В то же время АФК участвуют в редокс-регуляции ионного гомеостаза нейронов, вовлекая в эти процессы продукты ПОЛ, которые, повышая активность потенциалзависимых кальциевых каналов плазматической мембранны, индуцируют длительную потенциацию, лежащую в основе когнитивных

функций мозга, и влияют на высвобождение медиаторов и экспрессию генов [7, 24]. В нервных тканях липидные рафты участвуют в процессах клеточной адгезии и сигнальной трансдукции, а в нейронах к тому же и в росте аксонов и дендритов, везикулярном транспорте и синаптической передаче [21]. Бактериальная обработка умеренно снижает окислительные реакции в головном мозге, как это отражается на ПОЛ-индукционных адаптационно-защитных механизмах, включающихся при АКЭ, еще предстоит выяснить.

Системное подавление кишечной палочкой процессов ПОЛ при АКЭ препятствует оксидативному повреждению лейкоцитов и тканей организма и вносит свой вклад в механизмы ее противоопухолевого воздействия, что открывает новые перспективы использования *E. coli* в онкотерапии.

Поступила 27.03.15

### *Escherichia coli*-ի ոչ պաթոգեն շտամի հակառակուցքային և հակաօքսիդանտային ազդեցությունը Էրլիիի ասցիտային կարցինոմայի ժամանակ

Հ.Խ. Ավագյան, Հ.Ա. Մովսեսյան, Ն.Խ. Ալշուջյան,  
Ն.Հ. Մովսեսյան, Լ.Հ. Մելքոնյան, Լ.Գ. Ավանեսյան, Գ.Ա. Գևորգյան

*E. coli*-ի ոչ պաթոգեն շտամը ցուցաբերում է էական հակառակուցքային ակտիվություն Էրլիիի ասցիտային կարցինոմայի (ԷԱԿ) ժամանակ, որն ուղեկցվում է ԷԱԿ-ինդուկցված լիպիդների գերօքսիդացման (ԼԳ) արգելակմամբ՝ իջեցնում մալոնային դիալդեհիդի (ՄԴԱ) մակարդակը և *in vitro* ՄԴԱ-ի գոյացման գործընթացը (ոչ ֆերմենտային ԼԳ մոդել) որովայնի և արյան լեյկոցիտների ու գլխուղեղի հյուսվածքների բջջապատճենայի և միտոքոնդրիումների մեջ և արյան պլազմայում: Միաժամանակ, *E. coli*-ն խթանում է ՄԴԱ-ի *in vitro* գոյացման գործընթացը ուղղուցքային բջիջներում՝ նվազեցնելով իրենց դիմադրողականությունը:

Ստացված արդյունքները նոր հեռանկարներ են բացում *E. coli*-ի հետագա օգտագործման համար չարորակ ուղղուցքների բուժման մեջ:

## Anticarcinogenic and antioxidant effects of nonpathogenic *Escherichia coli* strain in Ehrlich ascites carcinoma

**H.Kh. Avagyan, H.A. Movsesyan, N.Kh. Alchujyan, N.H.Movsesyan,  
L.H. Melkonyan, L.G. Avanesyan, G.A. Kevorkian**

Non-pathogenic *E. coli* exerts a significant antitumor activity in Ehrlich ascites carcinoma (EAC) accompanied by a significant decrease of EAC-induced lipid peroxidation (LP) processes, reducing the level of malondialdehyde (MDA) and *in vitro* MDA formation (in a non-enzymatic LP model system) in the cytoplasm and mitochondria of peritoneal and blood leucocytes and brain tissues, as well as in blood plasma. Simultaneously, *E. coli* increases twice the MDA *in vitro* formation in tumor cells pointed to a diminished resistance to therapy. The data obtained offer a potential for further study of *E. coli* to advance therapeutic treatment of malignant tumors.

### **Литература**

1. Авагян О.Х., Алчуджян Н.Х., Мовсесян Н.О., Агабабова А.А. Метаболический профиль L-аргинина в головном мозге мышей при асцитной карциноме Эрлиха и влияние противоопухолевой терапии авирулентными штаммами *Escherichia coli*: синтаза оксида азота. Сообщение 2. Докл. НАН РА, 2013, т. 113, 4, с. 378-386.
2. Агабабова А.А., Мовсесян Н.О., Акопян А.М., Авагян О.Х. Морфогистохимические изменения при асцитной карциноме Эрлиха на фоне воздействия кишечной палочки. Докл. НАН РА, 2013, т. 113, 3, с. 303-310.
3. Владимиров Ю.А., Арчаков А.И. Перекисное окисление липидов в биологических мембранах. М., 1972.
4. Диже Г.П., Ещенко Н.Д., Диже А.А., Красовская И.Е. Введение в технику биохимического эксперимента. СПб., 2003.
5. Ланкин В.З., Тихазе А.К., Беленков Ю.Н. Свободнорадикальные процессы в норме и при заболеваниях сердечнососудистой системы. М., 2001.
6. Лебедев В.В. Супероксидная теория патогенеза и терапии иммунных расстройств. Вестник РАМН, 2004, т. 2, с. 34-40.
7. Питлик Т.Н., Булат П.М., Денисов А.А., Афанасенков Д.С., Черенкевич С.Н. Редокс-регуляция ионного гомеостаза в нейронах. Биохимия, 2009, т. 26, 2, с. 104–110.
8. Поцелуева М.М., Пустовидко А.В., Ковалева Е.В., Шаталин Ю.В., Евдотьевенко Ю.В. Цитотоксическое действие полиморфноядерных лейкоцитов на опухолевые и нормальные клетки при развитии асцитной опухоли *in vitro* и *in vivo*. Цитология, 2005, т. 47, 1, с. 57–63.
9. Практикум по экспериментальной онкологии на примере асцитной карциномы Эрлиха. Метод. разработка Красноярск. гос. ун-та. Сост. Е.В. Инжеваткин, Красноярск, 2004.
10. Смирнова Л.П., Кондакова И.В. Зависимость активности антиоксидантных систем от выраженности процессов пролиферации и типа тканевой организации карциномы Эрлиха. Биомед. хим., 2004, т. 6, с. 566–575.
11. Ткаченко А.Г. Зависимость защитных функций полиаминов *Escherichia coli* от токсического эффекта параквата, индуцирующего супероксидный стресс. Биохимия, 2004, т. 69, с. 234–242.
12. Ткаченко А.Г., Федотова М.В. Зависимость защитных функций полиаминов *Escherichia coli* от силы стрессорных воздействий супероксидных радикалов. Биохимия, 2007, т. 72, с. 109–116.

13. Хавинсон В.Х., Баринов В.А., Арутюнян А.В. Свободнорадикальное окисление и старение. СПб., 2003.
14. Alibek K., Bekmurzayeva A., Mussabekova A., Sultankulov B. Using antimicrobial adjuvant therapy in cancer treatment: a review. *Infect. Agents Cancer*, 2012, vol. 7, 1, p. 33–37.
15. Ayuyan A.G., Cohen F.S. Lipid peroxides promote large rafts: effects of excitation of probes in fluorescence microscopy and electrochemical reactions during vesicle formation. *Biophys. J.*, 2006, vol. 91, 6, p. 2172–2183.
16. Carswell E.A., Old L.J., Kassel R.L. et al. An endotoxin-induced serum factor that causes necrosis of tumors. *Proc. Natl. Acad. Sci.*, 1975, vol. 72, p. 3666–3670.
17. Bustamante J., Czerniczyniec A., Lores-Arnaiz S. Brain nitric oxide synthases and mitochondrial function. *Front. Biosci.*, 2007, vol. 12, p. 1034–1040.
18. Gambashidze K., Khorava P., Azaladze T. et al. Antitumor and adjuvant effects of phagelysates of *E.coli* in mice with Ehrlich carcinoma. *Exp. Oncol.*, 2012, vol. 34, 2, p. 107–111.
19. Chakravortty D., Hensel M. Inducible nitric oxide synthase and control of intracellular bacterial pathogens. *Microb. Infect.*, 2003, vol. 5, p. 621–627.
20. Gerritsen W.B., van Boven W.-J.P., Boss D.S. Malondialdehyde in plasma, a biomarker of global oxidative stress during mini-CABG compared to on- end off-pump CABG surgery: a pilot study. *Interact. Cardiovasc. Thorac. Surgery*, 2006, vol. 5, p. 27–31.
21. Hering H., Lin C.C., Sheng M. Lipid rafts in the maintenance of synapses, dendritic spines, and surface AMPA receptor stability. *J. Neurosci.*, 2003, vol. 23 (8), p. 3262–3271.
22. Hudault S., Guignot J., Servin A.L. Escherichia coli strains colonising the gastrointestinal tract protect germfree mice against *Salmonella typhimurium* infection. *Gut*, 2001, vol. 49, 1, p. 47–55.
23. Lowry O.H., Rosebrough N.J., Farr A.L., Randall R.J. Protein measurement with the Folin phenol reagent. *J. Biol. Chem.*, 1951, vol. 193, p. 265–275.
24. Lu C., Chan S.L., Fu W., Mattson M.P. The lipid peroxidation product 4-hydroxynonenal facilitates opening of voltage-dependent Ca<sup>2+</sup> channels in neurons by increasing protein tyrosine phosphorylation. *J. Biol. Chem.*, 2002, vol. 277, 27, p. 24368–24375.
25. Montero A.J., Diaz-Montero C.M., Kyriakopoulos C.E., Bronte V., Mandruzzato S. Myeloid-derived suppressor cells in cancer patients: a clinical perspective. *J Immunother.*, 2012, vol. 35, 2, p. 107–115.
26. Nishikawa M., Chang B., Inoue M. Inducible NO synthase inhibits the growth of free tumor cells, but enhances the growth of solid tumors. *Carcinogenesis*, 2004, vol. 25, 11, p. 2101–2105.
27. Oberley T., Schultz S., Li N. Antioxidant enzyme levels as a function of growth state in cell culture. *Free Rad. Biol. Med.*, 1995, vol. 19, p. 53–65.
28. O'Mahony S.M., Hyland N.P., Dinan T.G., Cryan J.F. Maternal separation as a model of brain-gut axis dysfunction. *Psychopharmacol. (Berlin)*, 2011, vol. 214 (1), p. 71–88.
29. Ozaslan M., Karagöz I.D., Guldur M.E. Ehrlich ascites carcinoma. *African J. Biotechnol.*, 2011, vol. 10, 13, p. 2375–2378.
30. Pajak B., Wojewódzka U., Gajkowska B., Orzechowski A. Lipid rafts in anticancer therapy: Theory and practice (Review). *Mol. Med. Rep.*, 2008, vol. 1, 2, p. 167–172.
31. Szuster-Ciesielska A., Hryciuk-Umer E., Stepulak A., Kupisz K., Kandef-Szerszen M. Reactive oxygen species production by blood neutrophils of patients with laryngeal carcinoma and antioxidative enzyme activity in their blood. *Acta Oncol.*, 2004, vol. 43, p. 252–258.
32. Vancíková Z., Lodinová-Zádníková R., Radl J., Tlaskalová-Hogenová H. The early postnatal development of salivary antibody and immunoglobulin response in children orally colonized with nonpathogenic, probiotic strain of *E. coli*. *Folia Microbiol. (Praha)*, 2003, vol. 48, 2, p. 281–287.
33. Waris G., Ahsan H. Reactive oxygen species: role in the development of cancer and various chronic conditions. *J. Carcinog.*, 2006, vol. 5, p. 14–16.

УДК 616.988.21

**Պայմանական ախտածին էնտերոբակտերիաների և  
պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների  
աղիեզիվության համեմատական  
գնահատականը**

Ն. Ս. Հարությունյան<sup>1</sup>, Ա. Ա. Լալայան<sup>1</sup>,  
Յու. Թ. Ալեքսանյան<sup>1</sup>, Գ. Գ. Մելիք-Անդրեասյան<sup>1</sup>,  
Կ. Վ. Հարությունյան<sup>2</sup>, Ա. Ա. Թոշունյան<sup>3</sup>

<sup>1</sup>Ա. Բ. Ալեքսանյանի անվ. համաձարակարանության,  
վիրուսաբանության և բժշկական մակարուծաբանության  
գիտահետազոտական ինստիտուտ,

<sup>2</sup>"Հայ կենսատեխնոլոգիա" գիտարտադրական կենտրոն,  
ՀՀ ԳԱԱ մանրէարանության ինստիտուտ,

<sup>3</sup>Երևանի պետական համալսարանի մանրէարանության,  
միկրոօրգանիզմների և բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոն  
0060, Երևան, Խուլյակովի փ. 1

**Բանալի բառեր.** աղիեզիններ, կոլոնիզացիոն գործոն, պայմանական  
ախտածին էնտերոբակտերիաներ, կաթնաթթվային  
բակտերիաներ

Մանրէների ախտածնության հիմնական գործոններից է նրանց  
աղիեզիվությունը կամ կոլոնիզացիոն հատկությունների դրսնորումը:  
Ինֆեկցիայի առաջնային օջախում մանրէների բազմացմանը և տոքսիկ  
հատկությունների դրսնորմանը նախորդում է նրանց աղիեզիան,  
կպումը հյուսվածքի պատին, որից էլ սկիզբ է դրվում ինֆեկցիոն  
պրոցեսի հավանական զարգացմանը [5,10]: Տարբեր հեղինակների աշ-  
խատանքները ցույց են տալիս, որ աղիեզիվ հատկությունները առավել  
արտահայտված են պայմանական ախտածին էնտերոբակտերիաների  
տարբեր ներկայացուցիչների մոտ [2,4,6,11]:

Պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաները մասնակցում են  
օրգանիզմում սննդամթերքների ձեղքմանը, վերամշակմանը, վիտա-  
մինների, ամինաթթուների սինթեզին և իրենց հակամիկրոբային ակ-  
տիվության շնորհիվ ճնշում են ախտածին մանրէների աճը [1]: Այս  
պրոցեսները իրականացնելու համար կաթնաթթվային բակտերիա-  
ները պետք է ընդունակ լինեն պահպանվելու, բնակվելու հաստ ադու

լորձաթաղանթում, որի նախապայմանն է նրանց աղհեզիվ հատկությունների դրսորումը [3]: Աղհեզիվ հատկությունների ձևավորման մեջ կարևոր են աղհեզիվության կոլոնիզացիոն գործոնները՝ (CFA – colonization factors antigens), որոնք տեղակայված են բակտերիալ բջջի ֆիմբրիաներում և կոչվում են նույնպես աղհեզիվության ֆիմբրիալ անտիգեններ: Ցույց է տրված, որ այդ գործոնները բաժանվում են երկու տիպի՝ CFA I և CFA II [8]: Աղհեզիվության անտիգենները ընդունակ են մարդու և տարբեր կենդանիների արյան էրիթրոցիտների հետ առաջացնել ազյուտինացիա: Հաստատված է, որ անտիգենները դրական ազյուտինացիայի ռեակցիաի մեջ են մտնում մարդու և տարբեր կենդանիների արյան էրիթրոցիտների հետ, որոնք ել հնարավորություն են տալիս նրանց բաժանել առանձին խմբերի [7,10]:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել աղհեզիվության անտիգենների առկայությունը պայմանական ախտածին էնտերոբակտերիաների տարբեր տեսակների և պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների մոտ ու տալ նրանց համեմատական գնահատականը:

### **Նյութը և մեթոդները**

Ուսումնասիրվել են պայմանական ախտածին էնտերոբակտերիաների (*Arizona*, *Klebsiella*, *Hafnia*, *Proteus vulgaris* և *Proteus mirabilis*) հարյուր շտամներ, որոնք անջատվել են տարբեր տարիքային խմբերի աղիքային հիվանդներից, և կաթնաթթվային բակտերիաների քսան շտամ, որոնցից *L. acidophilus* Ep. 317/402 <<Նարինե>> (ИНМИА 9602), *L. delbrueckii* var. bulgaricus var. mazuni K<sub>2</sub> (ИНМИА-9605), *L. acidophilus*-92 Ани (ИНМИА-9606), *S. lactis*-1304 (ИНМИА -9607), *S. thermophilus* M<sub>7</sub> (ИНМИА-9608), *L. acidophilus* Л<sub>2</sub> (ИНМИА-9609), *L. jugurti* (ИНМИА) անջատվել են «Հայ կենսատեխնոլոգիա» գիտարտադրական կենտրոնի միկրոօրգանիզմների խմորման լաբորատորիայում: Աղհեզիվությունը որոշվել է D-մաննոզա կայուն հեմազյուտինացիայի ռեակցիայի օգնությամբ: Ուսումնասիրության համար օգտագործվել է չորս տեսակի արյուն՝ մարդու II-րդ խմբի (A), խոշոր եղջերավոր անասունի (կով), մանր եղջերավոր անասունի (ոչխար) և հավի, որոնցից պատրաստվել է էրիթրոցիտների երեք տոկոսանոց կախույթ: Մանրէները նախօրոք ցանվել են մսապեպտոնային թեք ազարի վրա՝ թարմ կուլտուրա ստանալու համար: Այնուհետև կուլտուրաները ստուգվել են երեք տոկոսանոց էրիթրոցիտների կախույթի հետ հեմազյուտինացիայի ռեակցիայի օգնությամբ: Դրական հեմազյուտինացիայի ռեակցիայի դեպքում ավելացրել ենք մեկ տոկոսանոց D-ման-

նորա: Եթե նորից տալիս է դրական ռեակցիա, ապա խոսում ենք CFA կողոնիզացիոն գործոնի առկայության մասին: Եթե դրական է ռեակցիան մարդու, խոշոր եղջերավոր անասունի և հավի էրիթրոցիտների հետ, ապա առկա է CFA I կողոնիզացիոն գործոնը: Եթե բացասական է մարդու էրիթրոցիտների հետ և դրական է խոշոր և մանր եղջերավոր անասունի էրիթրոցիտների հետ, ապա առկա է կողոնիզացիայի CFA II գործոնը:

### **Արյունքները և դրանց քննարկումը**

Պայմանական ախտածին էնտերոբակտերիաների և կաթնաթթվային պրոբիոտիկ բակտերիաների աղիեզիվության ստուգման արդյունքները նկարագրված են աղյուսակում: Ինչպես երևում է աղյուսակից պայմանական ախտածին էնտերոբակտերիաների մոտ ախտածնության՝ կողոնիզացիոն գործոններ են հայտնաբերվել 52 դեպքում ( $52.0\pm5.0\%$ ), որն առավելապես արտահայտված է *Klebsiella pneumoniae*-ի ( $60.0\pm10.9\%$ ) և *P. vulgaris*-ի, *P. mirabilis*-ի շտամների մոտ ( $55.0\pm11.1\%$ ): Ըստ որում CFA I գործոնը հայտնաբերվել է 23 ( $44.2\pm6.9\%$ ), իսկ CFA II գործոնը 29 դեպքում ( $55.8\pm6.9\%$ ): Կաթնաթթվային բակտերիաների մոտ աղիեզիվության CFA գործոնը հայտանբերվել է յոթ դեպքում ( $35.0\pm10.7\%$ ), որից CFA I-ը հինգ դեպքում ( $71.4\pm17.0\%$ ), իսկ CFA II-ը երկու դեպքում ( $28.6\pm17.0\%$ ):

#### *Աղյուսակ*

*Պայմանական ախտածին էնտերոբակտերիաների և կաթնաթթվային պրոբիոտիկ բակտերիաների աղիեզիվության ստուգման արյունքները*

Մանրէի տեսակը	CFA		CFAI		CFAII	
	քաց.թ.	%	քաց.թ.	%	քաց.թ.	%
<i>Citrobacter</i> (20 շտամ)	10	$50.0\pm11.1$	4	$40.0\pm15.5$	6	$60.0\pm17.3$
<i>K.pneumoniae</i> (20 շտամ)	12	$60.0\pm10.9$	5	$41.7\pm14.2$	7	$58.3\pm14.2$
<i>Seratia</i> (20 շտամ)	8	$40.0\pm10.9$	4	$50.0\pm17.7$	4	$50.0\pm17.7$
<i>P. vulgaris</i> (20 շտամ)	11	$55.0\pm11.1$	5	$45.5\pm15.0$	6	$54.5\pm15.0$
<i>P. mirabilis</i> (20 շտամ)	11	$55.0\pm11.1$	5	$45.5\pm15.0$	6	$54.5\pm15.0$
Ընդամենը Պայմանական ախ- տածին էնտերոբակ- տորիաներ (100 շտամ)	52	$52.0\pm5.0$	23	$44.2\pm6.9$	29	$55.8\pm6.9$
Կաթնաթթվային բակտերիաներ (20 շտամ)	7	$35.0\pm10.7$	5	$71.4\pm17.0$	2	$28.6\pm17.0$

Պայմանական ախտածին էնտերոբակտերիաների և պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերաների աղիեզիվության գործոնների հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այդ հատկությունները ավելի արտահայտված են պայմանական ախտածին էնտերոբակտերիաների մոտ, և նրանց մոտ գերակշռում է ախտածության CFA II գործոնը իսկ պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերաների մոտ ախտածության CFA I գործոնը (Աղյուսակ):

*Поступила 26.04.15*

### **Сравнительная оценка адгезивности у условнопатогенных энтеробактерий и пробиотических молочнокислых бактерий**

**Н.М. Арутюнян, А.А. Лалаян, Ю.Т. Алексян,**  
**Г.Г. Мелик-Андреасян, К.В. Арутюнян, А.А. Трчунян**

Были исследованы факторы адгезии у условнопатогенных энтеробактерий и пробиотических молочнокислых бактерий. Выяснилось, что факторы адгезии более выражены у условнопатогенных энтеробактерий, причем у них преобладает фактор колонизации CFA II, в то время как у пробиотических молочнокислых бактерий – фактор колонизации CFA I.

### **Comparative estimation of adhesiveness of conditional pathogenic enterobacteria and probiotic lactic acid bacteria**

**N.M. Harutyunyan, A.A. Lalayan, Yu.T. Aleksanyan,**  
**G.G. Meliq-Andreasyan, K.V. Harutyunyan, A.A. Trchunyan**

There was conducted a research of adhesion factors in pathogenic enterobacteria and probiotic lactic acid bacteria. It was revealed that the adhesion factors are more expressed in pathogenic enterobacteria. In the pathogenic enterobacteria prevails the CFA II colonization factor, whereas in the probiotic lactic acid bacteria prevails the CFA I colonization factor.

### **Գրականություն**

1. Հակոբյան Լ.Հ., Մելիք-Անդրեասյան Գ.Գ., Հարությունյան Ն.Մ., Հարությունյան Կ.Վ., Թողունյան Ա.Հ., Հարությունյան Մ.Վ. Կենսաբանական բարձր հատկություններով օժտված պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերաների ստացումը: Համաձարակարանության արդիական հարցեր: Ա.Բ. Ալեքսանյանի անվան համաձարակարանության վիրուսաբանության և բժշկական մակարուծության

ինստիտուտի 90-ամյակին նվիրված միջազգային մասնակցությամբ գիտագրք-նական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2013, էջ 22-26:

2. Հովհաննիսյան Գ.Ա., Հարությունյան Ն.Մ., Լալայան Ա.Ա., Աղեքսանյան Յ.Թ. Աղեղիվության գործոնների և հեմոլիտիկ ակտիվության հայտնաբերումը *Proteus mirabilis*-ի և *Proteus vulgaris*-ի շտամների մոտ: ՀՀ ԳԱԱ Հայաստանի բժշկականություն, 2010, Լ, 4, էջ 65-68:
3. Արդյունյան Հ.Մ., Ալեքսանյան Յ. Տ., Մելիք-Անդրեասյան Գ.Գ., Ակոպյան Լ.Գ., Արդյունյան Կ.Բ., Արդյունյան Մ.Բ., Տրւոնյան Ա.Ա. Актуальные вопросы эпидемиологии. Мат. научно-практической конференции с международным участием, посвященной 90-летию НИИ эпидемиологии, вирусологии и медицинской паразитологии им. А.Б. Алексаняна, 2013, Ереван, с. 58-60.
4. Արդյունյան Հ.Մ., Լալայան Ա.Ա., Մելիք-Անդրեասյան Գ.Գ. Диагностическая значимость факторов патогенности условно-патогенных энтеробактерий. Актуальные вопросы диагностической медицины. Сборник научных трудов, посвященных 30-летнему юбилею медицинского объединения "Диагностика". Ереван, 2014, с. 33-38.
5. Ղազարյան Ս.Ս. և ուսումնական աշխատանքների մասին. Հայաստանի ազգային համալսարան, Երևան, 1991, 2, ս. 21-23.
6. Իվանովա Ե.Ի., Պոլոկова Ս.Մ., Շաբանովա Հ.Մ. Адгезивные свойства микроорганизмов, колонизирующих различные биотопы организма человека. Достижения молодых ученых в развитии инновационных процессов в экономике, науке, образовании. Сб. тр. III Междунар. науч.-практ. конф., Брянск, 2011, с 240-241.
7. Метод определения адгезивности энтеробактерий *in vivo*. Информационное письмо МЗ АрмССР, Ереван, 1987.
8. Методические рекомендации по определению факторов колонизации у кишечных бактерий. МЗ АрмССР, Ереван, 1984.
9. Jansen A.M., Lockatell V., Johanson D.E., Mobley H.L.T. Mannose- resistant *Proteus*- like fimbriae are produced by most *Proteus mirabilis* strains infecting the urinary tract, dictate the *in vivo* localization of bacteria, and contribute to biofilm formation. Infection and Immunity, 2004, vol. 72, 12, p. 7294-7305.
10. Mange J. et al. Adhesive properties of *Enterobacter sakazakii* to human epithelial and brain microvascular endothelial cells. BMS Microbiology, 2006, vol. 6, 58, p. 1186-1471.
11. Stankowska D., Kwinkowsko M., Kaca W. Quantification of *Proteus mirabilis* virulence factors and modulation by acylated homoserine lactones. J. Microbiol. Immunol. Infect., 2008; 41:243-253.

УДК 616.981.25-022.7:615.33+576.851.252

## Մետիցիլին կայուն ոսկեզույն ստաֆիլոկոկի զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ

Հ.Դ. Կարապետյան<sup>1,2</sup>, Ա.Զ. Համբարձումյան<sup>1</sup>,  
Մ.Մ. Տեր-Ստեփանյան<sup>1</sup>, Էնրիկե Էշեվարիա Օրելլա<sup>2</sup>, Ինհու  
Ֆերնանդեզ Աթուչա<sup>2</sup>

ԵՊՀ համաձարակարանության ամբիոն<sup>1</sup>,  
Բասկերի երկրի համալսարան, ֆիզիոլոգիայի ամբիոն, Իսպանիա<sup>2</sup>  
0025, Երևան, Կորյունի փ., 2

Բանալի բառեր. մետիցիլին կայուն ոսկեզույն ստաֆիլոկոկեր (ՄԿՈՍ),  
հակաբիոտիկներ, զգայունություն, ներ- և արտահի-  
վանդանցային շտամներ

1930-ականների երկրորդ կեսից սկսված հակամանրէային դա-  
րաշրջանի ծաղկումը էականորեն փոխեց կլինիկական բժշկության  
ուշադրության կենտրոնացումը, որը պահպանվեց նաև հաջորդ մի  
քանի տասնամյակներում [1, 2]: Հակաբիոտիկների ներդրումը հնարա-  
վորություն տվեց պրակտիկ բժիշկներին արդյունավետ պայքարել  
վարակիչ հիվանդությունների դեմ, ինչն էլ հիմք հանդիսացավ կար-  
ծելու, որ վարակիչ հիվանդությունների դեմ ճակատամարտը կարելի է  
համարել հաղթած և պետք է ավելի մեծ ուշադրություն, ժամանակ և  
շանքեր կենտրոնացնել ոչ վարակիչ քրոնիկ հիվանդությունների դեմ  
պայքարին: Լավատեսությունը կարճ տևեց ու անհաջողության մատն-  
վեց, քանի որ շուտով ի հայտ եկան դեղակայուն բակտերիաներ: Վլխնիկական կարևորություն ունեցող դեղակայունություն տեղի է  
ունենում մի քանի ամսից մինչև մի քանի տարի ժամանակահատ-  
վածում [3]: Այսպես, օրինակ՝ պենիցիլինի դեպքում դեղակայունու-  
թյունը սկսվեց նկատվել գործնական բժշկության մեջ ներդրումից եր-  
կու տարի անց, իսկ վանկումիցինի դեմ կայունությունը սկսվեց նկատ-  
վել 1987 թվականին ու կտրուկ տարածվեց հաջորդ չորսից վեց տա-  
րիների ընթացքում [4-6]: Այսօր արդեն, հաշվի առնելով համաձա-  
րակային պլոցեսում ներգրավված մանրէների ահրելի քանակությու-  
նը, արագ բազմացումը ու մուտացիաների առաջացման հավանակա-  
նությունը, կարելի է ասել, որ դեղակայունության առաջացումը գուտ

ժամանակի հարց է [7] և մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ կայունությունը հակաբիոտիկների նկատմամբ տարածվում է սպառնալի արագությամբ [8, 9]: Չկան հստակ համաշխարհային տվյալներ դեղակայուն միկրոօրգանիզմներից մահվան դեպքերի վերաբերյալ, սակայն, ըստ 2008 թվականի հետազոտության տվյալների՝ միայն Եվրոպիությունում տարեկան նվազագույնը 25000 մարդ է մահանում դեղակայուն միկրոօրգանիզմներով հարուցված հիվանդություններից: Իսկ դրանց հետ կապված լրացուցիչ ծախսերը ու արտադրողականության կորուստը գնահատվում են նվազագույնը 1,5 միլիարդ եվրո [10]:

Այս տեսակետից արդի առողջապահության առջև ծառացած սպառնալիքներից մեկն էլ մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկն է [11-13], որն արդեն կայունություն է ձեռք բերել ոչ միայն բետալակտամային հակաբիոտիկների, այլ նաև ֆլուրոկինոլոնների, ամինոգիկոգիդների, տետրացիլիկինների և տրիմետոպրին-սուլֆամետոքսազոլի նկատմամբ: Ուսկեցույն ստաֆիլոկոկերի շրջանում առաջին անգամ դեղակայունություն հայտնաբերվել է ԱՄՆ-ում 1980-ականների կեսերին: Սկզբնական շրջանում ոսկեգույն ստաֆիլոկոկերի դեղակայունություն տեղի է ունեցել մեծ հիվանդանոցներում, որոնք ունեին հինգ հարյուրից ավել մահակալ, իսկ հետո տարածվել է նաև փոքր հիվանդանոցներում, այլ բուժիչմնարկներում, ինչպես նաև հիվանդանոցներից դուրս: Ընդ որում՝ ոսկեգույն ստաֆիլոկոկերի շրջանում դեղակայունությունը աճեց 2,4%-ից 29,5%-ի 1975-ից 1991 թվականը ընկած ժամանակահատվածում [13]:

Հատկանշական է նաև, որ մետիցիլին զգայուն ոսկեգույն ստաֆիլոկոկի վերափոխումը մետիցիլին կայուն ստաֆիլոկոկերի սկսվում է հոսպիտալացման առաջին իսկ օրվանից, երբ որպես նախավիրահատական պրոֆիլակտիկա պացիենտին տրվում է ցեֆազոլին, իսկ ընտրողական հակաբիոտիկի ձնշման տակ գաղութայնացնող ֆլորան փոխվում է 24-48 ժամում [5]: 2011 թվականին ԱՄՆ-ում տարբեր պատճառներով հոսպիտալացված անձանցից ավելի քան 460000-ի մոտ հայտնաբերվել է մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկ, որոնցից 23000-ի դեպքում վերջինս մահվան պատճառ է հանդիսացել [2]:

## Նյութը և մեթոդները

Կատարվել են հետազոտություններ համաձարակաբանական, մանրէարանական և վիճակագրական մեթոդներով: Այս աշխատանքի ընթացքում արտահիվանդանոցային ՄԿՈՍ հայտնաբերելու նպատակով քուկներ են վերցվել բջջային հեռախոսներից և հանրային գուցարանների տարբեր առարկաներից: Իսկ ներիհիվանդանոցային ՄԿՈՍ-ի

հայտնաբերման համար քսուկներ են վերցվել հիվանդանոցի տարբեր առարկաներից և բուժանձնակազմի քթի խոռոչից: Աշխատանքի լաբորատոր մասը կատարվել է ԵՊԲՀ համաձարակարանության ամբիոնին կից գործող գիտահետազոտական լաբորատորիայում՝ օգտագործելով նույն լաբորատորիայի նյութատեխնիկական բազան: Միկրոօրգանիզմներ աճեցնելու նպատակով օգտագործվել են սովորական ագար, մանիստոլադային ագար, դեղնուցա-աղային ագար, սննդային միջավայր MRSA2՝ նախատեսված միայն ՄԿՈՍ-ի աճի համար: Բացի այդ օգտագործվել են նաև հակաֆիոտիկային սկավառակներ ներծծված վանկումիցին, ամոքսացիլին, պենիցիլին Գ, գենտամիցին, էրիթրոմիցին և օքսացիլին հակաբիոտիկներով: Վերջիններս օգտագործվել են նշված հակաբիոտիկների նկատմամբ ՄԿՈՍ-ի գգայունությունը որոշելու նպատակով:

Վիճակագրական հաշվարկներ կատարելու նպատակով օգտագործվել է IBM SPSS Statistics 22 համակարգչային վիճակագրական ծրագիրը:

### Արդյունքները և դրանց քննարկումը

Աշխատանքի ընթացքում ստացվել են ընդհանուր առմամբ 64 ՄԿՈՍ-ի նմուշներ, որոնցից 21-ը արտահիվանդանոցային են, իսկ 43-ը՝ ներիիվանդանոցային: Այդ նմուշների հակաբիոտիկազգայունության վերլուծության տվյալները ներկայացված են աղյուսակում:

*Աղյուսակ  
ՄԿՈՍ-ի անջատված նմուշների հակաբիոտիկազգայունությունը (p<0,05)*

	Օքսա- գիլին	Պենի- ցիլին Գ	Վան- կո- միցին	Էրիթ- րոմի- ցին	Գեն- տա- միցին	Ամոք- սացի- լին
Շապիրո-Վիլկի թեստ	0,008	0,002	0,001	0,000	0,000	0,000
Միջին թվաքանա- կան, մմ	15,14	13,77	18,44	20,86	14,81	10,92
Միջին թվաքանա- կանի միջին սխալ	0,500	0,765	0,620	0,977	0,836	1,217
Միջնարժեք, մմ	15	12	20	23	12	10
Նորմա, մմ	18	10	20	25	10	0
Ստանդարտ շելում	4,003	6,122	4,960	7,817	6,688	9,738
Առավելագույն արժեք, մմ	25	30	30	32	30	35
Նվազագույն արժեք, մմ	0	0	10	0	0	0
Կայունություն, %	32,8	60,9	28,1	15,6	67,2	65,6
Զգայունություն, %	67,2	39,1	71,9	84,4	32,8	34,4

Օրսացիլինի դեպքում հակաբիոտիկի ազդման շրջանի տրամագծի առավելագույն արժեքը եղել է 25մմ, իսկ նվազագույնը ազդման շրջանի բացակայությունն էր՝ 0մմ: Ըստ որում ստացված տվյալների միջին թվաբանականը հավասար էր 15,4-ի, իսկ միջին թվաբանականի միջին սխալը 0,500-ի: Ստացված վարիացիոն շարքի միջնարժեքը հավասար է 15-ի, իսկ առավել հաճախ հանդիպող արժեքն էր 18-ը: Ստանդարտ շեղման արժեքը 4,003 էր: Ըստ Շապիրո-Վիլկի թեստի վարիացիոն շարքի նորմալ բաշխվածության գործակիցը 0,008 էր, որը փոքր է 0,05-ից, ինչն էլ նշանակում է որ այս դեպքում վարիացիոն շարքը ոչ նորմալ բաշխվածության է: Հետազոտված նմուշներից օրսացիլինի նկատմամբ կայունություն են ցուցաբերել նմուշների 32,8%-ը, իսկ զգայուն են եղել 67,2%-ը:

Պենիցիլին Գ-ի դեպքում հակաբիոտիկի ազդման շրջանի տրամագծի առավելագույն արժեքը եղել է 30մմ, իսկ նվազագույնը ազդման շրջանի բացակայությունն էր՝ 0մմ: Ըստ որում, ստացված տվյալների միջին թվաբանականը հավասար էր 13,77-ի, իսկ միջին թվաբանականի միջին սխալը՝ 0,765-ի: Ստացված վարիացիոն շարքի միջնարժեքը հավասար է 12-ի, իսկ առավել հաճախ հանդիպող արժեքն էր՝ 10-ը: Ստանդարտ շեղման արժեքը 6,122 էր: Ըստ Շապիրո-Վիլկի թեստի՝ վարիացիոն շարքի նորմալ բաշխվածության գործակիցը 0,002 էր, որը փոքր է 0,05-ից, ինչն էլ նշանակում է, որ այս դեպքում վարիացիոն շարքը ոչ նորմալ բաշխվածության է: Հետազոտված նմուշներից պենիցիլին Գ-ի նկատմամբ կայունություն են ցուցաբերել նմուշների 60,9%-ը, իսկ զգայուն են եղել 39,1%-ը:

Վանկոմիցինի դեպքում հակաբիոտիկի ազդման շրջանի տրամագծի առավելագույն արժեքը եղել է 30մմ, իսկ նվազագույնը՝ 10մմ: Ըստ որում, ստացված տվյալների միջին թվաբանականը հավասար էր 18,44-ի, իսկ միջին թվաբանականի միջին սխալը՝ 0,620-ի: Ստացված վարիացիոն շարքի միջնարժեքը հավասար էր 20-ի, իսկ առավել հաճախ հանդիպող արժեքն էր՝ 20-ը: Ստանդարտ շեղման արժեքը 4,960 էր: Ըստ Շապիրո-Վիլկի թեստի՝ վարիացիոն շարքի նորմալ բաշխվածության գործակիցը 0,001 էր, որը փոքր է 0,05-ից, ինչն էլ նշանակում է, որ այս դեպքում վարիացիոն շարքը ոչ նորմալ բաշխվածության է: Հետազոտված նմուշներից Վանկոմիցինի նկատմամբ կայունություն են ցուցաբերել նմուշների 28,1%-ը, իսկ զգայուն են եղել համապատասխանաբար 71,9%-ը:

Էրիթրոմիցինի դեպքում հակաբիոտիկի ազդման շրջանի տրամագծի առավելագույն արժեքը եղել է 32մմ, իսկ նվազագույնը ազդման շրջանի բացակայությունն էր՝ 0մմ: Ըստ որում ստացված տվյալների միջին թվաբանականը հավասար էր 20,86-ի, իսկ միջին թվաբանա-

կանի միջին սխալը՝ 0,977-ի: Ստացված վարիացիոն շարքի միջնարժեքը հավասար է 23-ի, իսկ առավել հաճախ հանդիպող արժեքն էր՝ 25-ը: Ստանդարտ շեղման արժեքը 7,817 էր: Ըստ Շապիրո-Վիլկի թեստի վարիացիոն շարքի նորմալ բաշխվածության գործակիցը 0,000 էր, որը փոքր է 0,05-ից, ինչն էլ նշանակում է, որ այս դեպքում վարիացիոն շարքը կրկին ոչ նորմալ բաշխվածության է: Հետազոտված նմուշներից երիթրոմիցինի նկատմամբ կայունություն են ցուցաբերել նմուշների 15,6%-ը, իսկ զգայուն են եղել՝ 84,4%-ը:

Գենտամիցինի դեպքում հակաբիոտիկի ազդման շրջանի տրամագծի առավելագույն արժեքը եղել է 27մմ, իսկ նվազագույնը ազդման շրջանի բացակայությունն էր 0մմ: Ընդ որում, ստացված տվյալների միջին թվաբանականը հավասար էր 14,81-ի, իսկ միջին թվաբանականի միջին սխալը՝ 0,836-ի: Ստացված վարիացիոն շարքի միջնարժեքը հավասար է 12-ի, իսկ առավել հաճախ հանդիպող արժեքը՝ 10-ի: Ստանդարտ շեղման արժեքը 6,688 էր: Ըստ Շապիրո-Վիլկի թեստի վարիացիոն շարքի նորմալ բաշխվածության գործակիցը 0,000 էր, որը փոքր է 0,05-ից, ինչն էլ նշանակում է, որ այս դեպքում վարիացիոն շարքը ոչ նորմալ բաշխվածության է: Հետազոտված նմուշներից գենտամիցինի նկատմամբ կայունություն են ցուցաբերել նմուշների 67,2%-ը, իսկ զգայուն են եղել 32,8%-ը:

Ամքսացիլինի դեպքում հակաբիոտիկի ազդման շրջանի տրամագծի առավելագույն արժեքը եղել է 35մմ, իսկ նվազագույնը ազդման շրջանի բացակայությունն էր 0մմ: Ընդ որում, ստացված տվյալների միջին թվաբանականը հավասար էր 10,92-ի, իսկ միջին թվաբանականի միջին սխալը՝ 1,217-ի: Ստացված վարիացիոն շարքի միջնարժեքը հավասար է 10-ի, իսկ առավել հաճախ հանդիպող արժեքն էր՝ 0-ն: Ստանդարտ շեղման արժեքը 9,738 էր: Ըստ Շապիրո-Վիլկի թեստի՝ վարիացիոն շարքի նորմալ բաշխվածության գործակիցը 0,000 էր, որը փոքր է 0,05-ից, ինչն էլ նշանակում է, որ այս դեպքում վարիացիոն շարքը ոչ նորմալ բաշխվածության է: Հետազոտված նմուշներից ամոքսացիլինի նկատմամբ կայունություն են ցուցաբերել նմուշների 65,6%-ը, իսկ զգայուն են եղել 34,4%-ը:

Վերլուծելով ստացված տվյալները պարզ է դառնում, որ զգայունությունը ընտրված հակաբիոտիկների նկատմամբ տատանվում է բավականին մեծ ամպլիտուդով՝ 0-35մմ, ընդ որում՝ համեմատելով տարբեր հակաբիոտիկների նկատմամբ ՄԿՈՍ-ի զգայունության աստիճանը ստանում ենք, որ դրանք ըստ Կրուսկալ-ՈՒոլիս թեստի՝ 99% հավանականությամբ վիճակագրորեն հավաստի տարբերություններ ունեն: Բացի այդ տարբեր է նաև հակաբիոտիկների նկատմամբ կայունության աստիճանը՝ 15,6% - 65,6%, ինչը նշանակում է, որ

ՄԿՈՒ-ի նկատմամբ տարբեր հակաբիոտիկների կիրառման արդյունավետությունը շատ տարբեր է: Վերլուծելով տվյալները պարզ է դառնում նաև, որ հետազոտված նմուշների մեջ մեծ է բազմադեղակայուն ՄԿՈՒ-ի ներկայացուցիչների քանակը: Մասնավորապես՝ 2 հակաբիոտիկի նկատմամբ կայունություն նկատվել է հետազոտված ՄԿՈՒ-ներից 23,4%-ի մոտ, 3 հակաբիոտիկի նկատմամար կայունություն նկատվել է հետազոտված ՄԿՈՒ-ներից 34,4%-ի մոտ, 4 հակաբիոտիկի նկատմամար կայունություն նկատվել է հետազոտված ՄԿՈՒ-ից 23,4%-ի մոտ, 5 հակաբիոտիկի նկատմամար կայունություն նկատվել է հետազոտված ՄԿՈՒ-ներից 1,6%-ի մոտ: Ընտրված 6 հակաբիոտիկների նկատմամբ միաժամանակյա կայունություն ունեցող ՄԿՈՒ-ի ներկայացուցիչներ չեն հայտնաբերվել, իսկ ընդհանուր առմամբ բազմադեղակայուն են եղել հետազոտված ՄԿՈՒ-ի 81,2%-ը:

Ամփոփելով հետազոտության արդյունքում ստացված տվյալները զայիս ենք այն եզրահանգման, որ ՄԿՈՒ-ի զգայունությունը ընտրված հակաբիոտիկներից յուրաքանչյուրի նկատմամբ խիստ տարբեր է, ընդ որում խիստ տարբեր է նաև միևնույն հակաբիոտիկի ազդեցությունը ՄԿՈՒ-ի տարբեր ներկայացուցիչների վրա: Պարզ է դառնում նաև, որ ՄԿՈՒ-ի կայունությունը ընտրված հակաբիոտիկներից յուրաքանչյուրի նկատմամբ նույնպես շատ տարբեր է, իսկ բազմադեղակայունությունը կազմում է 75%:

*Поступила 05.03.15*

### **Устойчивость метициллинрезистентных золотистых стафилококков к антибиотикам**

**А.Д. Карапетян, А.Дз.Амбарцумян, М.М. Тер-Степанян,  
Энрике Эчевария Орелла, Инхоя Фернандез Атуча**

В процессе работы были выделены в общей сложности 64 штамма MP3C, 21 из которых – вне-, а 43 – внутрибольничные. Анализируя полученные данные, мы пришли к выводу о том, что чувствительность MP3C к каждому из использованных антибиотиков различна. Очевидно, что резистентность MP3C к каждому из выбранных антибиотиков также очень отличается, а полирезистентность среди них составляет 75%.

## Sensitivity of methicillin-resistant *Staphylococcus aureus* to antibiotics

H.D.Karapetyan, A.Dz.Hambardzumyan, M.M. Ter-Stepanian,  
Enrique Echevarria Orella, Inhoa Fernandez Atucha

In the process, there have been isolated a total of 64 strains of methicillin-resistant staphylococcus (MRSA), 21 of which are extrahospital and 43 – nosocomial. Analyzing the data we have concluded that the sensitivity of MRSA to each of the selected antibiotics is different, sensitivity to the same antibiotic among different strains of MRSA also differs. It has been revealed that polyresistance among the studied strains of MRSA makes 75%.

### Գրականություն

1. Arthur M., Courvalin P. Genetics and mechanisms of glycopeptide resistance in enterococci. *Antimicrob. Agents Chemother.*, 1993; 37: 1563–1571.
2. Barry G. Hall Predicting the evolution of antibiotic resistance genes. *Nature Reviews Microbiology*, May 2004, 2, 430-435.
3. Bulletin of the World Health Organization, 2011;89:88–89. doi:10.2471/BLT.11.030211.
4. Cohen M.L. Epidemiology of drug resistance: implications for a post antimicrobial era. *Science*, 1992;257:1050–5.
5. Davies J. Bacteria on the rampage. *Nature*, 1996; 383; 219 –220 .
6. Erdal Toprak, Adrian Veres, Jean-Baptiste Michel et al. Evolutionary paths to antibiotic resistance under dynamically sustained drug selection. *Nature Genetics*, 2012, 44, p.101–105.
7. Min Li, XinDu, Amer E. Villaruz, Binh An Diep et al. MRSA epidemic linked to a quickly spreading colonization and virulence determinant. *Nature Medicine*, 2012, 18, p. 816–819.
8. Martin E. Stryjewski and G. Ralph Corey Methicillin-Resistant *Staphylococcus aureus*: An Evolving Pathogen. *Clin. Infect. Dis.*, 2014, 58 (suppl 1): S10-S19.
9. M.M.L. van Rijen T. Bosch M.E. Heck O.C. et al. Methicillin-resistant *Staphylococcus aureus* epidemiology and transmission in a Dutch hospital. *Journal of Hospital Infection*, 2009, 72, 4, p. 299–306.
10. Murray E. Vancomycin resistant enterococci. *Am. J. Med.*, 1997;102; 284–293.
11. Neu H.C. The crisis in antibiotic resistance. *Science*, 1992;257:1064–72.
12. Stefania Stefani, Doo Ryeon Chung, Jodi A. Lindsay Methicillin-resistant *Staphylococcus aureus* (MRSA): global epidemiology and harmonisation of typing methods. *International Journal of Antimicrobial Agents*,2012, 39, 4, p. 273–282.
13. Walsh C., Fisher S. L., Park I. S. et al. Bacterial resistance to vancomycin: five genes and one missing hydrogen bond tell the story. *Chem. Biol.*, 1996; 3; 21–28.

УДК 615.21-085

**Մեքսիդոլի և հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-  
հիդրօքսիպիրիդինի ազդեցության ուսումնասիրումը  
առնետների վարքագծային ռեակցիաների և  
հիշողության վրա զլիսուղեղի լոկալ պերմանենտ  
իշեմիայի պայմաններում**

**Ն. Ա. Բաղդասարյան**

*ԵՊՀ Կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոն  
0025, Երևան, Կորյունի, 2*

*Բանալի բառեր.* հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին, մեքսիդոլ, տագնապ, հիշողության և ուսուցման գործնթացներ, զլիսուղեղի լոկալ իշեմիա

Արդի նյարդաբանության կարևոր խնդիրներից է զլիսուղեղի անթային ախտահարումը: Ուղեղային արյան շրջանառության խանգարումների հիմնախնդիրը խիստ արդիական է նաև Հայաստանի համար, որտեղ 2013 թվականի ընթացքում արձանագրվել է զլիսուղեղի կաթվածի 16047 նոր դեպք, 2554-ը՝ մահվան ելքով [1]: Ուղեղի իշեմիայի հետևանքով կարող են զարգանալ հոգենյարդաբանական շեղումներ [13], էմոնցիոնալ խանգարումների ընդգրկումով, ներառյալ տագնապի զարգացում[9], հիշողության և ուսուցման գործնթացների թուլացում [15] և ընդհանուր շարժողական ակտիվության ընկճում [10]: Փորձարարական կենդանիների մոտ սուր իշեմիկ կաթվածից հետո զլիսուղեղում զարգացող կենսաքիմիական փոփոխությունների ուսումնասիրումը վկայում է դրդիչ ամինաթթվային նյարդամիջնորդանյութերի՝ զյուտամատի և ասպարտատի չափից ավելի ձերբագատման մասին, ինչն էլ նպաստում է էքսայտոտոքսիկ ներքչային կալցիումի քանակության շատացմանը [19]: Ակնհայտ է, որ էքսայտոտոքսիկ գործնթացը կախված է դրդիչ և արգելակիչ մեխանիզմների հաշվեկշրից [20]: Ուղեղային հյուսվածքի իշեմիայի պայմաններում զյուտամատային էքսայտոտոքսիկության [11,14,18] հետ մեկտեղ նկատվում է նաև ազատ ռադիկալային գործնթացների ակտիվացում՝ լիպիդների գերօքսիդացման սուբստրատների խտության բարձրաց-

մամբ [12]: Ելնելով զյուտամատային էքսայտուտքսիկության, ազատ ռադիկալների գերարտադրության և ԳԱԿԹ-երգիկ համակարգի ընկածման միջև առկա կապից՝ կարելի է հիմնավորված համարել փորձարարական պայմաններում հակաօքսիդանտային ակտիվությամբ և ԳԱԿԹ-երգիկ համակարգը դրդող դեղամիջոցների ուսումնասիրումը [16,17]: Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում օքսիպիրիդինի ածանցյալներից մեքսիդոլը, որն իր արտահայտված տագնապամարիչ և նոռոտրոպ հատկությունների շնորհիվ լայն կիրառում է գտել գործնական բժշկության մեջ և նոր սինթեզված միացություն հեմիսուլցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդինը, որը փորձարարական պայմաններում դրսնորել է ուղեղի արյունահոսքը մեծացնելու ունակություն և նյարդապաշտպան ակտիվություն [2, 3, 6]:

## Նյութն ու մեթոդները

Փորձերն իրականացվել են 180-250 գր. կշիռ ունեցող 103 արու առնետների վրա: Կենդանիները պահվել են վիվարիումի ընդհանուր պայմաններում (Երևանի Ս. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի էթիկայի կոմիտեի արձանագրություն N4 18.12.2012): Ուղեղի լոկալ իշեմիայի մոդելավորումն իրականացվել է միջին ուղեղային զարկերակի կապումով ըստ Tamura et al. [22] և A. B. Топчян-ի [5] մոդիֆիկացիայով՝ քլորալիդորատի 400 մգ\կգ դեղաչափով լուծութի ներորուվայնային ներարկումով անզգայացնելուց հետո: Առնետները պահվել են լաբորատոր վիվարիումի պայմաններում՝ 12-ժամյա լուսային ռեժիմով՝ յուրաքանչյուր վանդակում 5-6 առնետ (Վիվարիումի ջերմաստիճանը 22-24° C է): Առնետների կենսարիթմերի խանգարումից խուսափելու համար բոլոր փորձերն իրականացվել են 9<sup>00</sup>-14<sup>00</sup> ընկած ժամանակահատվածում [23]: Փորձերի ժամանակ օգտագործված հեմիսուլցինատ2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդինը սինթեզել և մեզ են տրամադրել Զակուսովի անվան ԳՀԲ-ի փորձարարատեխնոլոգիական բաժնի աշխատակիցները (պրոֆ. Բ.Մ. Պյատին): Փորձերի համար օգտագործված կենդանիները տեսակավորվել են յոթ խմբերում: Առաջին խմբում ընդգրկվել են այն կենդանիները (n=26), որոնց վարքագծային փոփոխություններն ուսումնասիրվել են առանց միջին ուղեղային զարկերակի կապման (ինտակտ խումբ), երկրորդ խմբի կենդանիների մոտ (n=13) վարքագծային փոփոխությունները գրանցվել են միջին ուղեղային զարկերակի կապումից 6 օր հետո: Երրորդ խմբում (n=11) վարքագծային փոփոխություններն ուսումնասիրվել են միջին ուղեղային զարկերակի կապումից 12 օր հետո: Չորրորդ (n=14) և հինգերորդ (n=11) խմբում ուսումնասիրվել են վարքագծային

փոփոխություններն այն կենդանիների մոտ, որոնց միջին ուղեղային գարկերակի կապումից հետո ն/ն ուղիով ներարկվել է հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդինը՝ 200 մգ/կգ դեղաչափով համապատասխանաբար 6 և 12 օրերի ընթացքում:

Վեցերորդ (n=16) և յոթերորդ (n=12) խմբերում ուսումնասիրվել է այն կենդանիների վարքագիծը, որոնց միջին ուղեղային գարկերակի կապումից հետո ն/ն ներարկվել է մեքսիդոլ պատրաստուկը՝ 200 մգ/կգ դեղաչափով 6 և 12 օրերի ընթացքում:


Կենդանիների մոտ տագնապի զարգացման ուսումնասիրությունն իրականացվել է բարձրացված խաշաձև լարիրինթոս (ԲԽՆԼ) [21] թեստով: Գնահատվել են հետևյալ ցուցանիշները՝ բաց թևերում անցկացված ժամանակը (OT), ընդհանուր մուտքերի թիվը (TN), բաց թևերի հաճախումների տոկոսը (ON/TN), լաբիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակահատվածը (CT): Վարքագծի փոփոխությունները գրանցվել են միջին ուղեղային գարկերակի կապումից 6 և 12 օր անց, քանի որ համաձայն գրականության մեջ առկա տվյալների՝ հենց այդ ժամանակահատվածում են առնետների ուղեղային հյուսվածքում նկատվում առավել արտահայտված փոփոխությունները [4, 5]: Հիշողության և ուսուցման գործընթացների ուսումնասիրումը կատարվել է պասիվ խուսափման պայմանական թեստի միջոցով: Թեստն ուսումնասիրվել է պարզ քայլ միջով տեսակի պասիվ խուսափման իրավիճակում [7]: Ստացված արդյունքների վիճակագրական մշակումը կատարվել է ըստ ANOVA միազգործոն դիսպեսված անալիտիկ մեթոդի [8]: Ստացված արդյունքների հավաստիությունը գնահատվել է ըստ Стъюдент-ի t-չափանիշի:

### **Արդյունքները և քննարկումը**


Միջին ուղեղային գարկերակի կապումից 6 օր հետո նկատվում է տագնապի ցուցանիշների աճ՝ համեմատած ինտակտ խմբի կենդանիների հետ (նկ. 1), որն արտահայտվում է հետևյալ ցուցանիշներով՝ օլյուգիայից 6 օր հետո բաց թևերում անցկացված ժամանակի նվազում 77,35%-ով ( $59,77 \pm 59,24$ -ից  $13,54 \pm 20,61$ ), ընդհանուր մուտքերի թվի նվազում 52,83%-ով ( $4,08 \pm 1,92$ -ից  $1,92 \pm 0,76$ ), բաց թևերի հաճախումների տոկոսի նվազում 45,29%-ով ( $42,18 \pm 27,02$ -ից  $23,08 \pm 23,11$ ), լաբիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակի նվազում 77,28%-ով ( $60,62 \pm 34,67$ -ից  $13,77 \pm 10,54$ ):

6 օր հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդինի կիրառման ֆոնի վրա համապատասխան ցուցանիշների փոփոխությունը համեմատած առանց պատրաստուկի ներարկման կապումից 6 օր անց

ցուցանիշների հետ այսպիսին է՝ (նկ. 2-5)` բաց թևերում անցկացված ժամանակի աճ 8,25 անգամ ( $13,54 \pm 20,61$ -ից  $111,75 \pm 76,66$ ), ընդհանուր մուտքերի թվի աճ 1,95 անգամ ( $1,92 \pm 0,76$ -ից  $3,75 \pm 2,21$ ), բաց թևերի հաճախումների տոկոսի աճ 2,27 անգամ ( $23,08 \pm 23,11$ -ից  $52,43 \pm 29,89$ ), լարֆիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակի աճ 3,55 անգամ ( $13,77 \pm 10,54$ -ից  $48,94 \pm 34,63$ ):




Նկար 1. Վարքազային փոփոխությունները ստուգիչ խմբերի մոտ մինչ ՄՈՒԶ-ի կապումը և կապումից համապատասխանաբար 6 և 12 օր անց:




Նկար 2. Բաց թևերում անցկացրած ժամանակի (OT) փոփոխությունը ստուգիչ խմբերի համեմատ մեքսիդոլ և մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին հեմիսուկցինատ պատրաստուկներով բուժման ֆոնի վրա:

Ստուգիչ խմբի մոտ միջին ուղեղային զարկերակի կապումից 12 օր հետո արձանագրված փոփոխություններն են (նկ. 2-5)` բաց թևերում անցկացված ժամանակի նվազում  $71,14\%-ով$  ( $40,00 \pm 59,24$ -ից  $11,55 \pm 14,39$ ), ընդհանուր մուտքերի թվի նվազում  $48,71\%-ով$  ( $4,08 \pm 1,92$ -ից  $2,09 \pm 0,94$ ), բաց թևերի հաճախումների տոկոսի նվազում  $42,53\%-ով$  ( $42,18 \pm 27,02$ -ից  $24,24 \pm 23,99$ ), լարիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակի նվազում  $69,85\%-ով$  ( $60,62 \pm 34,67$ -ից  $18,27 \pm 14,64$ ): Այս ցուցանիշների համեմատ պատրաստուկի ներարկումից 12 օր հետո վարքազիր համապատասխան ցուցանիշները փոխվել են հետևյալ կերպ (նկ. 2-5)` բաց թևերում անցկացված ժամանակն աճել է  $6,5$  անգամ ( $11,55 \pm 14,39$ -ից  $75,08 \pm 51,18$ ), ընդհանուր մուտքերի թիվը աճել է  $1,43$  անգամ ( $2,09 \pm 0,94$ -ից  $3,00 \pm 1,28$ ), բաց թևերի հաճախումների տոկոսը աճել է  $2$  անգամ ( $24,24 \pm 23,99$ -ից  $48,47 \pm 25,99$ ), լարիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակն աճել է  $5,36$  անգամ ( $18,27 \pm 14,64$ -ից  $98,00 \pm 47,87$ ):




Նկար 3. Ընդհանուր մուտքերի քանակի (TE) փոփոխությունը ստուգիչ խմբերի համեմատ մերսիդոլ և մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին հեմիսուլկցինատ պատրաստուկներով բուժման ֆոնի վրա:

Հիշողության ուսումնասիրումը կատարվել է *պասիվ խուսափման պայմանական ռեֆլեքս թեստի* միջոցով, որի արդյունքում առնետների հիշողությունը բնութագրող ցուցանիշը փոխվել է հետևյալ կերպ՝<sup>6</sup> օր պատրաստուկի ն/ն ներմուծումից հետո հիշողության ցուցանիշը  $53,85\%-ից$  դարձել է  $87,50\%$  (աճել է  $62,49\%-ով$ ): 12 օր պատրաստուկի ներմուծումից հետո հիշողության ցուցանիշը  $45,45\%-ից$  դարձել է  $75\%$  (աճել է  $65,02\%-ով$ ) (նկ. 6):




Նկար 4. Բացթևերի մուտքերի տոկոսի (ՕԵ%) փոփոխությունը ստուգիչ խմբերի համեմատ մեքսիդոլ և մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդինին հեմիսուկցինատ պատրաստուկներով բուժման ֆոնի վրա:

Ըստ առնետների տագնապայնությունը բնութագրող բոլոր 4 ցուցանիշների՝ հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդինով բուժման ֆոնի վրա փորձարարական կենդանիների տագնապայնությունը զգալիորեն նվազել է, ընդ որում բացի լարիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակի ցուցանիշից, մնացած երեք ցուցանիշների տվյալները վկայում են դեղի առավել արտահայտված տագնապամարիչ ազրեցության մասին՝ 6-օրյա բուժումից հետո: Նմանատիպ դինամիկա է նկատվում նաև հիշողության և՝ 6, և՝ 12 օր բուժման արդյունքում. բարելավվում է առնետների հիշողությունը, ընդ որում առավել արտահայտված՝ բուժման 6-րդ օրը: Մեքսիդոլ պատրաստուկի 6-օրյա ներարկումից հետո առնետների մոտ արձանագրվել են վարքագծային հետևյալ փոփոխությունները՝ բացթևերում անցկացված ժամանակի աճ 5,14 անգամ ( $13,54 \pm 20,61$ -ից  $69,64 \pm 58,91$ ), ընդհանուր մուտքերի թվի աճ 1,71անգամ ( $1,92 \pm 0,76$ -ից  $3,29 \pm 1,59$ ), բացթևերի հաճախումների տոկոսի աճ 1,91 անգամ ( $23,08 \pm 23,11$ -ից  $44,05 \pm 21,65$ ), լարիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակի աճ 3,72 անգամ ( $13,77 \pm 10,54$ -ից  $51,21 \pm 33,89$ ): Մեքսիդոլ պատրաստուկի 12 օրյա կիրառումից հետո առնետների մոտ արձանագրված վարքագծային փոփոխություններն են՝ բացթևերում անցկացված ժամանակի աճ 6,69 անգամ ( $11,55 \pm 14,39$ -ից  $77,27 \pm 68,97$ ), ընդհանուր մուտքերի թվի աճ 1,39 անգամ ( $2,09 \pm 0,94$ -ից  $2,91 \pm 1,38$ ), բացթևերի հաճախումների տոկոսի աճ 1,91 անգամ ( $24,24 \pm 23,99$ -ից  $46,21 \pm 30,13$ ), լարիրինթոսի կենտրոնում անցկացված ժամանակի աճ 5,3 անգամ ( $18,27 \pm 14,64$ -ից  $96,82 \pm 56,24$ ):



Նկար 5. Կենտրոնում անգլայրաձ ժամանակի (CT) փոփոխությունը ստուգիչ խմբերի համեմատ մեքսիդոլ և մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին հեմիսուկցինատ պատրաստուկներով բուժման ֆոնի վրա:

Մեքսիդոլ պատրաստուկի ներարկումից հետո պասիվ խուսափման թեստի միջոցով հիշողության ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են փորձարարական կենդանիների հիշողությունը բնութագրող ցուցանիշի հետևյալ փոփոխությունները՝ 6 օր պատրաստուկի ներարկման ֆոնի վրա այն 53,85%-ից դարձել է 71,43%:(աճել է 32,65%-ով): 12 օր պատրաստուկի ներմուծումից հետո՝ 45,45%-ից դարձել է 72,73% (աճել է 60,02%-ով):



Նկար 6. Հիշողության ցուցանիշի փոփոխությունը ստուգիչ խմբերի համեմատ մեքսիդոլ և մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին հեմիսուկցինատ պատրաստուկներով բուժման ֆոնի վրա:

Ներկայացված տվյալների հիման վրա, համեմատելով մեքսիդոլ և հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին պատրաստուկների կիրառման ֆոնի վրա առնետների վարքագծային և հիշողության ցուցանիշները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Երկու պատրաստուկներն էլ 12-օրյա բուժման արդյունքում ցուցաբերում են տագնապայնության բոլոր ցուցանիշների զգալի նվազում և հիշողության ցուցանիշի աճ՝ համեմատած փորձարարական իշեմիայի ենթարկված և բուժում չստացած ստուգիչ խմբի 12-րդ օրվա արդյունքների հետ
2. Ինչ վերաբերում է 6-օրյա բուժման արդյունքներին, ապա ըստ տագնապայնությունը բնութագրող 3 ցուցանիշների (բացառությամբ լաբիրինթոսի կենտրոնում գտնվելու ժամանակի), ինչպես նաև հիշողության ցուցանիշի՝ հեմիսուկցինատ մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին պատրաստուկը դրսնորում է առավել արտահայտված դրական փոփոխություններ, քան մեսքիդոլը: Սա կարող է վկայել հեմիսուկցինատ 2-մեթիլ-6-էթիլ-3-հիդրօքսիպիրիդին պատրաստուկի տագնապամարիչ հատկությունների առավել արագ հասունացման մասին:

*Поступила 23.02.15*

## **Изучение влияния мексидола и гемисукцината 2-метил-6-этил-3-гидроксипиридина на изменения поведенческих реакций и памяти крыс в условиях локальной перманентной ишемии головного мозга**

**Н.А.Багдасарян**

Было изучено влияние мексидола и гемисукцината 2-метил-6-этил-3-гидроксипиридина (в дозах 200 мг/кг, в/б) на поведенческие изменения крыс после перевязки средней мозговой артерии. Для изучения тревожности и изменения памяти были использованы тесты приподнятого крестообразного лабиринта и рефлекса пассивного избегания. После 6- и 12-дневного курса лечения было выявлено, что оба препарата снижают тревожность и улучшают память, причем при применении гемисукцината 2-метил-6-этил-3-гидроксипиридина эффект достигается уже на 6-й день, а на 12-й день лечения изученные показатели почти одинаковы.

**The study of influence of mexidol and hemisuccinate 2-methyl-6-ethyl-3-hydroxypyridine on rats' behavioral responses and memory in cerebral local permanent ischemia conditions**

**N.A.Baghdasaryan**

The influence of mexidol and hemisuccinate 2-methyl-6-ethyl-3-hydroxypyridine (in doses 200 mg/kg, i/p) was studied on behavioral changes of rats after occlusion of left middle cerebral artery. Particularly, elevated plus maze test (EPM) and passive avoidance test were used to estimate anxiety and memory changes in animals. The comparative assessment of the influence of mexidol and hemisuccinate 2-methyl-6-ethyl-3-hydroxypyridine in courses of 6- and 12- day treatment showed that both compounds reduced anxiety criteria of elevated plus maze and improved the memory criteria of passive avoidance test after 6- and 12- day treatment. Moreover, hemisuccinate 2-methyl-6-ethyl-3-hydroxypyridine markedly revealed these improvements already on the 6th day of the treatment, while on the 12-th day of the treatment the studied criteria were similar for both compounds.

### **Գրականություն**

1. ՀՀ ԱՆ «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեզիրք, Երևան, 2014:
2. Ганышина Т. С., Горбунов А. А., Гнездилова А. В. и соавт. Влияние гемисукцината 2-этил-6-метил-3-гидроксипиридина на кровоснабжение мозга крыс при экспериментальной патологии. Эксперим. и клин. фармакол., 2011, т.74, 8, с.17- 22.
3. Кузин В. Б., Чечет И. В., Чечет О. Ю. Исследование антигипоксической активности некоторых новых производных 3-оксипиридина. Психофармакология и биологическая наркология, 7, Спец. выпуск, ч. 1, 2007.
4. Мирзоян Р.С., Топчян А.В., Ка наян А.С. и др., Влияние нимодипина на локальное ишемическое поражение мозга, Вестн. РАМН, 1998, 11, с. 46-51.
5. Топчян А. В., Мирзоян Р. С., Баласанян М. Г. Локальная ишемия мозга крыс, вызванная перевязкой средней мозговой артерии. Эксперим. и клин. фармакол., 1996, т. 59, 5, с. 62-64.
6. Чугунов А. В., Камчатнов П. Р., Михайлова Н. А. Коррекция свободнорадикального окисления – патогенетический подход к лечению острого ишемического инсульта, Журнал невр. и псих., 2009, т. 10, 2, с. 65-68.
7. Ader R., Weijnen J. A.W.M., Moleman P. Retention of a passive avoidance response as a function of the intensity and duration of electric shock. Psychon. Sci., 1972, Vol. 26, p. 125-128.
8. Analyzing ANOVA Designs, Biometrics Information Handbook 5, 9, 1995.
9. Astrom M. Generalized anxiety disorder in stroke patients. Stroke, 1996;27:270-275.
10. Béjot Y., Giroud M., Moreau T. et al. Clinical spectrum of movement disorders after stroke in childhood and adulthood. Eur. Neurol., 2012, 68(1):59-64.
11. Danbolt N.CI., Glutamate uptake. Prog. Neurobiol., 2001, Sep;65, 1:1-105.
12. Gigun-Suerrki Y., Rosenbaum Z., Melamed E. et al. Pharmacol. Rev., 2002, 54, 2, p.271-84.

13. Hama S., Yamashita H., Yamawaki S. et al. Post-stroke depression and apathy: Interactions between functional recovery, lesion location, and emotional response. *Psychogeriatrics*, 2011, 11, 1:68-76.
14. Juurlink B.H., Sweeney M.I. Mechanisms that result in damage during and following cerebral ischemia. *Neurosci. Biobehav. Rev.*, 1997, Mar., 21(2):121-8.
15. Karasawa N., Arai R., Isomura G. Phenotypic changes of AADC-only immunopositive premammillary neurons in the brain of laboratory shrew *Suncusmurinus* by systemic administration of monoamine precursors. *Neurosci. Lett.*, 1994, 179(1-2):6. 5-70.
16. Kontos H.A. Oxygen radicals in cerebral ischemia: the 2001 Willis lecture. *Stroke*, 2011, Nov; 32(11):2712-6.
17. Lancelot E., Revaud M.L., Boulu R.G., Plotkine M., Callebert J. Alpha-Phenyl-N-tert-butylNitronate attenuates excitotoxicity in rat striatum by preventing hydroxyl radical accumulation. *Free Radic. Biol. Med.*, 1997, 23(7):1031-4.
18. Lipton P. Ischemic cell death in brain neurons. *Physiol. Rev.*, 1999, Oct;79(4):1431-568.
19. Meldrum B., Evans M., Griffiths T., Simon R. Ischaemic brain damage: the role of excitatory activity and of calcium entry. *Br. J. Anaesth.* 1985, 57(1):44-6.
20. Meldrum B., Garthwaite J. Excitatory amino acid neurotoxicity and neurodegenerative disease. *Trends Pharmacol. Sci.*, 1990, Sep;11(9):379-87.
21. Pellow S., Chopin P., Briley M. Validation of open: closed arm entries in an elevated plus-maze as a measure of anxiety in the rat. *J. Neurosci. Meth.*, 1985, 14, p.149-167.
22. Tamura I., Graham J. et al. *J. Cereb. Blood Flow Metab.*, 1981, 1, p. 53-60.
23. Warren P.F., Peat M.A., Gibb J.W. The effects of a single dose of amphetamine and iprindole on the serotonergic system of the rat brain. *Neuropharmacology*, 1984, Jul;23(7A):803-6.

УДК 615.273 : 612.824

## Տրիֆլուզալի ազդեցությունը ուղեղի արյան շրջանառության վրա

**U.S. Քարամյան**

*Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ, ֆարմակոլոգիայի ամբիոն  
0025, Կորյուն փ., 2*

*Բանալի բառեր. տրիֆլուզալ, ասպիրին, գլխուղեղի արյան շրջանառություն, զարկերկային ձնշում*

Չնայած գլխուղեղի իշեմիկ խանգարումներին նվիրված բազմաթիվ հետազոտությունների և փորձակած դեղերի լայն ընտրանու առկայությանը, իշեմիկ կաթվածը շարունակում է մնալ անաշխատունակության ամենակարևոր և մահացության 2-րդ պատճառն աշխարհում [17]:

Իշեմիկ կաթվածի բուժման և երկրորդային կանխարգելման գործընթացում առանցքային դեր և հաստատված արդյունավետություն ունեն հակաագրեգանտները, որոնցից ոսկե ստանդարտ և առաջնային ընտրության դեղ է հանդիսանում ասպիրինը [13]: Այս ընտրությունը հիմնված է ասպիրինի ազդեցության մեխանիզմի առանձնահատկությամբ (ՅՕԳ անդարձելի պաշարում), բավականաչափ պարզաբանված դեղաբանական ազդեցությամբ, բազմաթիվ երկարաժամկետ հետազոտություններով հաստատված արդյունավետությամբ:

Սակայն ասպիրինը ունի նաև մի շարք թերություններ՝ աղեստամոքսային բարդություններ, արյունահոսություններ և ալերգիկ երևույթներ առաջացնելու մեծ հավանականություն, ինչպես նաև հիվանդների 25-30%-ի մոտ զարգացող ասպիրինային կայունություն [10, 14]: Ինչ վերաբերում է սիրտանոթային պատահարների ռիսկի նվազեցմանը, ապա այն գերազանցում է պլացեբո էֆեկտը 15-20%-ով [2]:

Կան նաև հետազոտություններ, որոնք որպես ասպիրինի կիրառման էֆեկտ սուր փորձերում արձանագրել են գլխուղեղի արյան շրջանառության նվազում [4]: Այս երևույթի կիսնիկական դրսերում կարելի է համարել ասպիրինի կիրառման ցածր արդյունավետությունը հարաբերական ցածր ռիսկային խմբի հիվանդների մոտ ուղեղա-

նոթային պատահարների կանխարգելման նպատակով [11]: Բացի այդ, փորձարարական մոդելում ապացուցվել է հյուսվածքային պլազմինոգենի խթանիչի նկատմամբ ասպիրինի անտագոնիզմը և թրոմբալուծարման արդյունավետության նվազումը [3]: Այս թերությունները բացատրվում են ասպիրինի, թեկուզ և հակաագրեգանս դեղաչափավորմամբ (50-350մգ), բացասական ազդեցությամբ էնտրթելիալ NO-ի և PgI<sub>2</sub> սինթեզի և ձերբազատման վրա: Նշված հզոր անոթալայնիչ և հակաագրեգանս գործոնների վրա ասպիրինի բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով կիրառվում են տարբեր համակցումներ (դիպիրիդամոլ+ասպիրին), և շարունակվում է ասպիրինի նոր ածանցյալների ուսումնասվիրումը [5,6]:

Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում համեմատաբար նոր հակաագրեգանս տրիֆլուզալը (2-ացետօքսի-4-ենֆտորմեթիլ բենզոյական թթու), որը, հանդիսանալով ասպիրինի կառուցվածքային ածանցյալ, ունի մի շարք ֆարմակոդիմամիկ և ֆարմակոկինետիկ առանձնահատկություններ [7]: Տրիֆլուզալի հակաագրեգանս ազդեցությունը բացի թրոմբոցիտար ՅՕԳ-1 անդարձելի պաշարումից պայմանավորված է նաև թրոմբոցիտար ֆուֆոդիէսթերազի պաշարմամբ և էնտրթելիալ NO-ի ձերբազատման խթանմամբ: Այս բազմաթիրախային ազդեցությամբ տրիֆլուզալը և նրա ակտիվ մետաբոլիտը (3-հիդրօքսի-4-ենֆտորմեթիլ բենզոյական թթու) ցուցաբերում են բավական արտահայտված հակաագրեգանտային ազդեցություն՝ միաժամանակ ապահովելով կողմնակի ազդեցությունների արտահայտման ավելի ցածր հաճախականություն [1]:

Վերը նշվածը հիմք հանդիսացավ ուսումնասվիրելու տրիֆլուզալի ազդեցությունը ուղեղի արյան շրջանառության վրա՝ վերջինիս խանգարման պայմաններում:

## Նյութն ու մեթոդները

Փորձերի համար օգտագործվել են ոչ ցեղային սպիտակ արու առնետներ (170-220գ, n=50): Կենդանիները պահվել են լաբորատոր վիվարիումի պայմաններում. 12/12 լույս/մութ ռեժիմ, ջրի և սննդի անսահմանափակ առկայություն, վեցական առնետ յուրաքանչյուր վանդակում:

Կիրառվել է «USP» ստանդարտ նմուշի ասպիրին և «Grupo Uriach, Spain» արտադրության տրիֆլուզալ: Ասպիրինը և տրիֆլուզալը նախապես տրորվել են մի քանի կաթիլ սպիրտում (հաշվի առնելով դրանց հիդրոֆոր հատկությունները) և լուծվել 0,9% NaCl-ի լուծություն:


Դեղերը ներմուծվել են ներորովայնային ներմուծման ձանապարհով, 3մգ/100գ հաշվարկով:

Ուղեղի տեղային արյան միկրոշրջանառության քանակական որոշումը իրականացվել է լազեր-դոպլերային հոսքաչափության մեթոդով: Փորձին նախորդող օրը կենդանիները զրկվել են սննդից, ջրից ազատ օգտվելու հնարավորությունից: Վիրահատական միջամտությունները կատարվել են ընդհանուր անզգայացման պայմաններում՝ 5% քլորալիդրատի ներորովայնային ներարկմամբ ( $0,6\text{մլ}/100\text{գ}$ ): Գլխուղեղի արյունամատակարարման խանգարումն առաջացվել է ձախ ընդհանուր քներային զարկերակի (CFLQ) կապումով, որը նախապես մեկուսացվել է 6-0 չներծծվող թելով: Առնետները անշարժացվել են ստերեոտաքսիկ կաղապարի վրա (Stoelting, Wood Dale, IL, U.S.A): Գլխի փափուկ հյուսվածքները բացելուց հետո զանգատուփի գագաթային հատվածում կատարվել է հատում 1.5-3մմ տրամագծով: Տեղային արյան հոսքի արագության գրանցումը իրականացվել է լազեր-դոպլերային հոսքաչափի օգնությամբ (“Transonic System Inc.” BLF-21) [15]: Այդ հոսքաչափի ասեղնաձև գրանցիչը անշարժացվել է առնետի գլխուղեղի գագաթաքունքային հատվածում (ձախ կողմում) և գրանցվել է գլխուղեղի կեղևի տեղային արյունահոսքը: Որոշ ժամանակ անց կատարվել է ձախ ընդհանուր քնային զարկերակի կապում և նորից գրանցվել է արյան շրջանառությունը: Ապա ն/ո ներմուծման եղանակով տրվել է համապատասխան դեղը (ասպիրին կամ տրիֆլուզալ), իսկ հսկիչ խմբում՝ ֆիզլուծույթ, և 50 րոպեի ընթացքում գրանցվել է արյան հոսքի արագությունը [16]:

Առնետների համակարգային զարկերակային ճնշման ( $\Delta P$ ) որոշումը կատարվել է *tail-cuff* ոչ ինվազիվ մեթոդով, որը ապահովում է պոշային զարկերակում սիստոլիկ, դիաստոլիկ և միջին զարկերակային ճնշման ավտոմատացված չափումը սենսորային մանժետի օգնությամբ (LE 5001 Pressure meter) [12]: Խուճապածին գործոնները բացառելու նպատակով փորձից առաջ առնետները 3-5 օր վարժեցվել են հատուկ նախատեսված խցին և զարկերակային ճնշման չափման պայմաններին: Վարժեցված կենդանիների մոտ գրանցվել են դեղերի և ֆիզլուծույթի ազդեցությամբ պայմանավորված նշված ցուցանիշների արժեքները: Չափումները կատարվել են մեկ ժամվա ընթացքում ներարկումնեից 10 րոպե հետո (5 րոպե ընդմիջումներով): Պոչային զարկերակի անփոփոխ տոնուսի ապահովման նպատակով փորձը իրականացվել է  $35^{\circ}\text{C}$  հաստատուն ջերմաստիճանում [18]:

## Արյունքները և դրանց քննարկումը

Ինչպես ցույց տվեցին կատարված փորձերը, ՀՔԶ կապումը բերում է առնետների գլխուղեղի կեղևի միկրոշրջանառության (ԳԿՄՇ) վատթարեցման, ինչը արտահայտվում է արյունահոսքի նվազմամբ միջինում  $38,48\%$ -ով՝ կազմելով նախնական արյունահոսքի  $61,52 \pm 10,62\%$ -ը ( $p<0,01$ ): Ասպիրինի ն/ն ներարկումը ուղեկցվում է ԳԿՄՇ հետագա խափանմամբ, որն իր առավելագույն արժեքին է հասնում 45-րդ րոպեին՝ կազմելով նախնական արյունահոսքի  $50,38 \pm 10,53\%$ -ը ( $p<0,01$ ): Այս տվյալները վկայում են, որ ՀՔԶ կապումից հետո գրանցված արյունահոսքի համեմատ ասպիրինը նվազեցնում է առնետների ԳԿՄՇ-ը  $15,51 \pm 5,42\%$ -ով ( $p<0,01$ ): Գլխուղեղի արյան շրջանառության խանգարման պայմաններում նույն դեղաչափով տրիֆլուզալ ստացած կենդանիների մոտ արյունահոսքի հավելյալ նվազում գրեթե չի նկատվում, իսկ ֆիզլուծույթի ներարկումը ուղեկցվում է արյան հոսքի աննշան և ոչ հավաստի իջեցմամբ: Հատկանշական է, որ ներարկումից հետո առաջին 10 րոպեի ընթացքում թե ասպիրինը, թե ֆիզլուծույթը բերում են ԳԿՄՇ իջեցման գրեթե միևնույն չափով, մինչդեռ տրիֆլուզալի ներարկումը չի ուղեկցվում նմանատիպ փոփոխությամբ: Ավելին, եթե ասպիրինը շարունակում է իջեցնել արյունահոսքը՝ պահպանելով այն ցածր մակարդակի վրա ավելի քան 45 րոպեի ընթացքում, ապա տրիֆլուզալի դեպքում 20-րդ րոպեից սկսած նկատվում է արյունահոսքի բարձրացում և 45-րդ րոպեին ֆիզլուծույթի և տրիֆլուզալի ցուցանիշները գրեթե հավասարվում են (նկ. 1):



Նկար 1. Տրիֆլուզալի և ասպիրինի ազդեցությունը ուղեղի տեղային արյան շրջանառության վրա

*Աղյուսակ 1*


*Sրիֆլուզալի և ասպիրինի ազդեցությունը ուղեղի տէղային արյան  
շրջանառության վրա*

ԳՎՄՇ / Խումբ		Ֆիզ. լ-ք	Ասպիրին	Տրիֆլուզալ
<b>ԸՔԶ կապումից հետո</b>		62,16±12%*	59,63±11%*	62,24±11%*
<b>Արտադրություն</b>	5ր	56,52±10%**	54,66±15%	61,96±8,7%
	10ր	51,79±9%**	53,63±7,24%**	58,42±5,48%
	20ր	54,34±9%**	50±10%**	56±5,87%**
	30ր	55±7%	49,72±10%**	58,13±6%
	45ր	57,2±6%	50,38±11%**	59,97±8,55%

\* p<0,05 համեմատ ելային արյունահոսքի

\*\* p<0,05 համեմատ ԸՔԶ կապումից հետո արյունահոսքի

Հետազոտության հաջորդ փուլում ուսումնասիրվել է նյութերի ազդեցությունը ԶՃ բնորոշող բաղադրիչների վրա: Տրիֆլուզալի և լուծիչի ն/ն ներարկումը չի ուղեկցվել սխսողիկ, դիաստոլիկ, միջին ԶՃ-ների վիճակագրորեն հավաստի փոփոխություններով: Իսկ ինչ վերաբերում է ասպիրինին, ապա վերջինիս ն/ն ներարկման դեպքում գրանցվել է նշված ցուցանիշների որոշակի անկում (նկ. 2):



\* p<0,05 համեմատ հսկիչ խմբի

Նկար 2. Տրիֆլուզալի և ասպիրինի ազդեցությունը զարկերակային ձնշման վրա

Այսպիսով, ստացված տվյալները վկայում են, որ տրիֆլուզալը ի համեմատ ասպիրինի ավելի բարենպաստ ազդեցություն է թողնում ուղեղի արյան շրջանառության վրա՝ վերջինիս իշեմիկ խանգարման պայմաններում:

Այս առավելությունները, հավանաբար, պայմանավորված են տրիֆլուզալի առանձնահատկություններով, մասնավորապես կնքրթելիալ NO սինթեզի խթանմամբ և թրոմբոցիտար ՑՕԳ-ի նկատմամբ ավելի մեծ խնամակցությամբ:

Միաժամանակ ներկայացված արդյունքները վկայում են, որ ի տարբերություն ասպիրինի [8,9] տրիֆլուզալի ուղեղանոթային էֆեկտները չեն ուղեկցվում ԶՃ փոփոխություններով:

Ստացված տվյալները համալրում են գրականության մեջ նկարագրված տրիֆլուզալի առանձնահատկությունները և հանդիսանում են ասպիրինի համեմատ տրիֆլուզալի նշանակման առավել մեծ անվտանգության ապացուցողական հիմք:

Поступила 26.04.15

## Влияние трифлюзала на мозговое кровообращение

С.Т. Карамян

Изучены эффекты трифлюзала на мозговое кровообращение (МК) в условиях ишемии и на системное артериальное давление (АД) при сопоставлении с таковыми аспирина.

Эксперименты проводились на белых беспородных крысах-самцах массой 170-220г (n=50). Нарушение МК вызывали односторонней окклюзией правой общей сонной артерии. Трифлюзал и аспирин вводились в/б в дозе 30мг/кг. Регистрация локального мозгового кровотока(ЛМК) проводилась в теменной области коры головного мозга животного с помощью лазерного допплеровского флюметра. Систолическое и диастолическое АД крыс были измерены *tail-cuff* методом.

Результаты проведенных исследований показали, что после перевязки правой сонной артерии в/б введение аспирина привело к дальнейшему ухудшению кровоснабжения мозга. Максимальное падение ЛМК было зарегистрировано на 45 минуте после инъекции (на  $15,51 \pm 5,42\%$  (mean $\pm$  SD, p<0,01) по сравнению с окклюзией). В отличие от аспирина в/б введение трифлюзала не сопровождалось значимыми изменениями ЛМК. Подобные изменения были зарегистрированы и при измерениях АД: аспирин снижал среднее АД на  $6,57 \pm 5,6$  мм рт. ст. (mean $\pm$ SD,p<0,01), в то время как трифлюзал не оказывал влияния на указанный параметр.

Таким образом, данные проведенного исследования свидетельствуют, что трифлузал не усугубляет нарушенный в условиях ишемии мозговой кровоток и может обеспечить большую безопасность при вторичной профилактике ишемических инсультов.

## Influence of triflusul on cerebral blood flow

S.T. Karamyan

Effects of triflusul on local cerebral blood flow (LCBF) under the conditions of ischemia and systemic blood pressure (BP) were examined in compression with aspirin.

Adult male Albino rats weighing 170–220 g were used (n=50). Brain ischemia was caused by ligation of the right common carotid artery (rCCA). Triflusul and aspirin were injected intraperitoneally in the dose of 30mg/kg. Laser Doppler-flowmetry was used to monitor the LCBF in the right hemisphere. Systolic and diastolic blood pressures of rats were measured using the *tail-cuff* method.

The data obtained have shown that after rCCA ligation IP injection of aspirin decreases LCBF in the right hemisphere, aggravating ischemic process. The maximum reduction of CBF is noticed at the 45-th minute after injection and is up to  $15,51\pm5,42\%$  (mean $\pm$ SD,p<0,01) compared with occlusion. As opposed to aspirin, IP injection of triflusul does not cause any significant changes in LCBF.

The same changes have been stated during BP measurements: aspirin reduces BP, especially mean arterial blood pressure for  $6,57\pm5,6$  mmHg (mean $\pm$ SD,p<0,01), but triflusul does not cause any changes.

Thus, our findings evidence that triflusul does not decrease cerebral blood flow during disturbances and could be safer for secondary prevention of ischemic stroke.

## Գրականություն

1. Alvarez-Sabin J., Quintana M., Santamarina E., Maisterra O. Triflusul and aspirin in the secondary prevention of atherothrombotic ischemic stroke: a very long-term follow-up. *Cerebrovasc. Dis.*, 2014;37(3):181-7. doi: 10.1159/000357662. Epub 2014 Feb 5.
2. Antithrombotic Trialists' Collaboration. Collaborative meta-analysis of randomized trials of antiplatelet therapy for prevention of death, myocardial infarction, and stroke in high risk patients. *BMJ*, 2002; 324(7329), p. 71-86.
3. Bednar M.M., Gross C.E., Howard D.B. et al. The effect of vasodilators on aspirin-induced antagonism of t-PA thrombolysis. *Neurol. Res.*, 2001, Oct; 23(7), p. 745-750.
4. Bendar M.M., Gross C.E. Aspirin reduces experimental cerebral blood flow in vivo. *Neurological Research*, 1999, 21(5), p. 488-490.

5. Chaturvedi S. Acetylsalicylic Acid + Extended-Release Dipyridamole Combination Therapy for Secondary Stroke Prevention. Clinical Therapeutics, 2008, Vol. 30, 7, p. 1196-205.
6. Fredduzzi S., Mariucci G., Tantucci M., Del Soldato P., Ambrosini M.V. Nitro-aspirin (NCX4016) reduces brain damage induced by focal cerebral ischemia in the rat. Neurosci. Lett., 2001, Apr 20;302(2-3), p. 121-4.
7. González-Correa J.A., De La Cruz J.P. Triflusal: an antiplatelet drug with a neuroprotective effect? Cardiovasc. Drug Rev., 2006, Spring;24(1), p. 11-24. Review.
8. Hermida R.C., Ayala D.E., Calvo C. et al. Administration Time-Dependent Effects of Aspirin on Blood Pressure in Untreated Hypertensive Patients. Hypertension, 2003, 41, p. 1259-1267.
9. Hermida R.C., Ayala D.E., Mojón A. and Fernández J.R. Ambulatory blood pressure control with bedtime aspirin administration in subjects with prehypertension. Am. J. Hypertens., 2009; 22:896-903.
10. Hovens M.M., Snoep J.D., Eikenboom J.C. et al. Prevalence of persistent platelet reactivity despite use of aspirin: a systematic review. Am. Heart. J., 2007;153(2), p.175-181.
11. Kim Y.J. et al. Evaluation of low-dose aspirin for primary prevention of ischemic stroke among patients with diabetes: a retrospective cohort study. Diabetol. Metab. Syndr., 2015 Feb 15;7:8. doi: 10.1186/s13098-015-0002-y. eCollection 2015.
12. Kurtz T.W., Griffin K.A., Bidani A.K., Davisson R.L., Hall J.E. Recommendations for blood pressure measurement in animals: summary of an AHA scientific statement from the Council on High Blood Pressure Research, Professional and Public Educational Subcommittee. Arterioscler. Thromb. Vasc. Biol., 2005 Mar, 25(3), p. 478-479.
13. Mark J. Alberts Antithrombotic therapy for secondary stroke prevention. Continuum Lifelong Learning Neurol., 2011, 17(6), p. 1255–1266.
14. Mason P.J., Jacobs A.K., Freedman J.E. Aspirin resistance and atherothrombotic disease. J. Am. Coll. Cardiol., 2005, 46(6), p. 986-93.
15. Oberg P.A., Tenland T. and Nilsson G.E. Laser-Doppler flowmetry – a non-invasive and continuous method for blood flow evaluation in microvascular studies. Acta Med. Scand. (Suppl.), 1984, vol. 687, p. 17–24.
16. Stem M.D., Lappe D.L., Bowen P.D. et al. Continuous measurement of tissue blood flow by laser-Doppler spectroscopy. Am. J. Physiol., 1977, 232, p. H.441-H448.
17. Thrift A.G., Cadilhac D.A., Thayabaranathan T. et al. Global stroke statistics. Int. J. Stroke, 2014 Jan;9(1), p. 6-18.
18. Воронина Т.А., Островская Р.У. Методические указания по изучению ноотропной активности фармакологических веществ. В кн.: Фисенко В.П., Арзамасцев Е.В. и др. Руководство по экспериментальному (доклиническому) изучению фармакологических веществ, М., 2000, с.153-158.

УДК 612.44.018:616.893-053.8-092.9

## **Показатели функционального восстановления при повреждении седалищного нерва крыс в условиях метаболических нарушений**

**В.А. Чавушян, Л.Г. Аветисян, К.В. Симонян**

*Институт физиологии им. Л.А. Орбели НАН РА,  
лаборатория нейроэндокринных взаимоотношений  
0028, Ереван, ул. Бр. Орбели, 22*

**Ключевые слова:** фруктоза, сдавливание седалищного нерва, мотонейроны спинного мозга

Чрезмерное потребление фруктозы вызывает метаболический синдром, ассоциируемый с изменениями функционирования центральной и периферической нервных систем. Гипергликемия, инсулиновая резистентность и липидемия – неотъемлемые компоненты диабета и важные факторы риска периферических нейропатий [1, 13]. Современные изучения подтверждают роль инсулина и расстройства его метаболизма в развитии патологий периферического нерва [1], а также большую степень вредоносного воздействия диабета первого и второго типа на периферическую нервную систему по сравнению с центральной нервной системой [1, 6].

Метabolизм глюкозы через сорбитный путь сильно ассоциирован с шванновской клеткой [5], хотя не совсем ясно, являются ли метаболиты причиной физиологической дисфункции, или служат исключительно в качестве индекса биохимического повреждения. Аккумуляция в нерве продуктов сорбитного пути вызывает дисфункцию шванновских клеток в виде сегментарной демиелинизации, что в свою очередь приводит к повышенной «уязвимости» к травматическому повреждению [12].

С целью изучения функционального восстановления после сдавливания седалищного нерва крыс в условиях метаболических нарушений, вызванных чрезмерным потреблением фруктозы, в данной работе исследованы показатели рефлекса отведения поврежденной конечности и синаптической активности мотонейронов спинного мозга при высокочастотной стимуляции (ВЧС) дистального участка поврежденного нерва.

## Материал и методы

Эксперименты проведены в двух группах: в первой группе (фруктоза+сдавливание) у белых половозрелых крыс-самцов (5 животных массой 230-250г) вызывали метаболический синдром путем применения с питьевой водой 50% диетической фруктозы в течение шести недель и после этого проводили сдавливание седалищного нерва. Животные продолжали получать фруктозу в течение 28 постоперационных дней; во второй группе (сдавливание) проводили сдавливание седалищного нерва у интактных животных (n=5).

Сдавливание левостороннего седалищного нерва в верхней трети бедра (на 4 мм выше трифуркации) производили под нембуталовым наркозом (40 мг/кг, в/б) кровоостанавливающим незазубренным зажимом в положении первого зубца в течение 30 сек [2], с последующим наложением швов на мышечные / кожные ткани и подкожным введением бициллина 3.

Спустя 1 - 28 дней после сдавливания седалищного нерва в группе фруктоза+сдавливание проведен анализ динамики восстановления чувствительной функции, основанный на показателях теста рефлекса отведения (ТРО), который проводили путем раздражения постоянным током наружной стороны подошвы задних лап bipolarным электродом, состоящим из 2 медных проволок диаметром 1мм с межэлектродным расстоянием 2 мм [3]. Цифровым показателем данного теста служила пороговая величина силы тока (mA), вызвавшая рефлекс отведения на поврежденной и здоровой конечностях. Все числовые значения (величины) представлены как усредненные значения  $\pm$  SEM по t-критерию Стьюдента для 5 животных. Различия считались статистически значимыми при  $P<0,05$ .

Спустя 28 дней под уретановой анестезией (1,1 г/кг, в/б) животных фиксировали в стереотаксическом аппарате, ультразвуковым ножом производили перерезку спинного мозга на уровне Т2, вводили миорелаксант (1% дитилин, 25 мг/кг, в/б) и переводили на искусственное дыхание. Далее производили дорсальную ламинэктомию пояснично-крестцового отдела спинного мозга, а также отпрепаровывали дистальный участок сдавленного седалищного нерва. Для экстраклеточной регистрации спайковой активности мотонейронов стеклянный микроэлектрод с диаметром кончика 1 мкм, заполненный 2 М раствором KCl, многократно погружали по стереотаксическим координатам ( $L \pm 0,7-1,6$  мм,  $V +1,7-1,85$  мм) [7] в передние рога серого вещества поясничных сегментов спинного мозга (L4-L5 ipsilaterальной стороны по отношению к поврежденному нерву). ВЧС (100 Гц в течение 1 сек) дистального участка поврежденного седалищного нерва осуществляли bipolarными серебряными электродами путем применения толчков прямоугольного постоянного электрического тока с длительностью 0,05 мсек и амплитудой 0,10 - 0,14 мА. Импульсный поток

мотонейронов, после селекции посредством амплитудного дискриминатора, подвергался программному анализу с последующим выводом распределенного в реальном времени пре- и постстимульного спайкинга активности единичных нейронов и построением на их основе гистограмм средних частот с данными многоуровневой статистической обработки дифференцированно для пре- и постстимульного времени, включая период ВЧС (разработчик В.С. Каменецкий). Для избираемых сравниваемых групп нейрональной спайковой активности программно строили усредненные перистимульные временные гистограммы. Целью анализа являлось определение статистической достоверности различий в длительности межспайковых интервалов до и после действия ВЧС. Для дальнейшей оценки отбирали лишь нейрональные единицы, спайковый поток которых имеет уровни значимости не более 0,05. Экспериментальные данные получены в целом на 10 крысах. В мотонейронах спинного мозга зарегистрировано 510 мотонейронов в группе сдавливание, 282 мотонейрона – в группе фруктоза+сдавливание.

## Результаты и обсуждение

Согласно показателям ТРО группы фруктоза+сдавливание, спустя день после повреждения седалищного нерва чувствительность к электрическому току, приложенному к коже подошвы, значительно понижается на поврежденной конечности (величина ТРО  $98,0 \pm 4,6$  мА;  $P=0,17$ , unpaired t test) по сравнению с теми же показателями здоровой конечности (величина ТРО  $50,0 \pm 1,6$  мА;  $P=0,33$ ). К 28-му дню сдавливания нерва разница этих же показателей на здоровой и поврежденной конечности значительно уменьшается ( $56,0 \pm 1,0$  мА;  $P<0,05$  на здоровой и  $63,5 \pm 2,2$  мА;  $P=0,75$  на поврежденной) (рис. 1). Таким образом, исследование динамики показателей ТРО здоровой и поврежденной конечности после одностороннего сдавливания седалищного нерва в группе фруктоза+сдавливание выявило некоторое восстановление чувствительной функции поврежденной конечности к 28-му дню сдавливания нерва. Электрофизиологическое исследование активности мотонейронов спинного мозга, вызванной на стимуляцию дистального участка поврежденного седалищного нерва, последующий анализ импульсного потока единичных нейронов выявили формирование различных комбинаций ответов в виде учащения импульсного потока – тетанической потенциации (ТП) и посттетанической потенциации (ПТП), а также урежения импульсного потока – тетанической депрессии (ТД) и посттетанической депрессии (ПТД). Зарегистрированы также смешанные комбинации ответов – ТП-ПТД и ТД-ПТП. Выраженность компонентов ответов оценивалась согласно значениям среднего уровня спайковой активности (число спайков) на данном отрезке перистимульной гистограммы: в группе фруктоза+сдавливание в нейронах с




Рис. 1. Усредненные показатели величин тока (mA), вызывающих рефлекс отведения здоровой и поврежденной лап задних конечностей при электрической стимуляции кожи подошвы в динамике от 1 до 28 дней после одностороннего сдавливания седалищного нерва в группе фруктоза+сдавливание

ТП-ПТП и ТП-ПТД ответами количество спайков на время ВЧС меньше по сравнению с таковыми в группе сдавливание (рис. 2).




Рис. 2. Усредненные перистимульные временные гистограммы для популяций мотонейронов, проявляющих ТП-ПТП, ТД-ПТД, ТД-ПТП, ТП-ПТД ответы, и ареактивных единиц в группах сдавливание и фруктоза+сдавливание

В нейронах с ТД-ПТД и ТД-ПТП ответами средний уровень спайковой активности практически идентичен на протяжении всей регистрации, а ареактивные мотонейроны группы фруктоза+сдавливание проявляют значительно высокий уровень спайковой активности (рис.2). Программный анализ перистимульной активности для популяции нейронов, проявляющих данный тип ответов на ВЧС нерва, дает возможность оценки цифровых показателей средней частоты престимульного, постстимульного спайкового потока и такового на время тетанизации или ВЧС, которые приведены в табл. 1 и 2.

Таблица 1

*Цифровые показатели средней частоты престимульного, постстимульного спайкового потока и такового на время ВЧС, а также долевое соотношение для указанных типов ответов в группе сдавливание*

Типы ответов	Средняя частота престимульного спайкового потока (имп/сек)	Средняя частота спайкового потока на время ВЧС (имп/сек)	Средняя частота постстимульного спайкового потока (имп/сек)	Процентная доля из всех зарегистрированных нейронов
Ареактивные	2,58	2,33	2,79	0,59 % (3 из 510)
ТД-ПТД	16,59	7,98	10,30	16,67 % (85 из 510)
ТД-ПТП	15,22	6,03	21,02	7,65 % (39 из 510)
ТП-ПТД	9,83	48,83	5,86	27,25 % (139 из 510)
ТП-ПТП	7,03	51,28	12,93	43,9 % (224 из 510)

Таблица 2

*Цифровые показатели средней частоты престимульного, постстимульного спайкового потока и такового на время ВЧС, а также долевое соотношение для указанных типов ответов в группе фруктоза+сдавливание*

Типы ответов	Средняя частота престимульного спайкового потока (имп/сек)	Средняя частота спайкового потока на время ВЧС (имп/сек)	Средняя частота постстимульного спайкового потока (имп/сек)	Процентная доля из всех зарегистрированных нейронов
Ареактивные	12,92	13,41	12,89	6,02 % (17 из 282)
ТД	10,42	6,67	10,16	1,1 % (3 из 282)
ТП	-	-	-	
ПТД	12,34	12,89	9,69	9,6 % (27 из 282)
ПТП	14,68	14,58	21,15	9,6 % (26 из 282)
ТД-ПТД	18,85	9,00	13,52	15,96 % (45 из 282)
ТД-ПТП	14,31	6,64	18,46	12,8 % (36 из 282)
ТП-ПТД	7,10	26,21	4,02	15,24 % (43 из 282)
ТП-ПТП	8,14	21,80	12,09	30,14 % (85 из 282)

Результаты проведенного исследования свидетельствуют о том, что сдавливание седалищного нерва на фоне метаболического синдрома характеризуется аномальной синаптической активностью мотонейронов спинного мозга и нарушением баланса возбудительных/тормозных вызванных ответов. Анализ перистимульных гистограмм спайковой активности для мотонейронов в сравниваемых экспериментальных группах сдавливание и фруктоза+сдавливание позволил заключить:

- в мотонейронах, проявляющих возбудительные ответы на высокочастотную стимуляцию дистального участка поврежденного седалищного нерва в группах сдавливание (табл. 1) и фруктоза+сдавливание (табл. 2), зарегистрированы идентичный престимульный (7,03 и 8,14 спайк/сек) и постстимульный (12,93 и 12,09 спайк/сек) уровни средней частоты спайковой активности, а также значительно более выраженная ТП в группе сдавливание (51,28 спайк/сек) по сравнению с группой фруктоза+сдавливание (21,80 спайк/сек). Доля популяции таких нейронов доминирует как в группе сдавливание (43,9%), так и в группе фруктоза+сдавливание (30,14%);
- в группах сдавливание и фруктоза+сдавливание практически идентичные уровни активности (престимульной, постстимульной и на время ВЧС) зарегистрированы для мотонейронов, проявляющих ТД-ПТД и ТД-ПТП. Доля нейронов с ответами в виде ТД-ПТД составляла 16,67% и 15,96%, а в виде ТД-ПТП – 7,65% и 12,8%, в соответствующих группах;
- в нейронах, проявляющих ТП-ПТД ответы, зарегистрированные на время ВЧС ТП в группах сдавливание и фруктоза+сдавливание, соответственно составляют 48,83 и 26,21 спайк/сек. Престимульный уровень спайковой активности этих нейронов выше в группе сдавливание. Долевое соотношение этих мотонейронов составляет 27,25% в группе сдавливание и 15,24% в группе фруктоза+ сдавливание. В группе фруктоза+сдавливание выявлены мотонейроны, проявляющие лишь слабо выраженную ПТП (9,6 %) и ПТД (9,6 %), а также ареактивные единицы (6,0%).

В целом, по-видимому, увеличение доли мотонейронов с ПТП и ПТД ответами и ареактивных единиц в группе фруктоза+сдавливание служит показателем неполноценности нейрональной цепи рефлекторной дуги спинного мозга (с вовлечением мотонейронов и интернейронов) в условиях дегенерации. Таким образом, экстраклеточной регистрацией спайковой вызванной активности единичных нейронов выявлены электрофизиологические показатели аномальной активности, характеризуемые наличием ареактивных единиц и слабой выраженностью компонентов ответов на время ВЧС, а также дисбалансом типов ответов в виде отно-

сительно равномерного соотношения тормозных / возбудительных ответов при стимуляции дистального участка поврежденного седалищного нерва.

Таким образом, выявлены значительное повышение порога чувствительности поврежденной конечности (1-18 дней) и тенденция выравнивания чувствительности здоровой и поврежденной конечности (21-28 дней) при электрическом раздражении подошвы задней конечности после сдавливания седалищного нерва у крыс с фруктозой индуцированным метаболическим синдромом. Спустя 28 дней после сдавливания седалищного нерва у крыс с фруктозой индуцированным метаболическим синдромом в мотонейронах лумбарного отдела спинного мозга зарегистрирована аномальная синаптическая активность, характеризуемая нарушением выраженности и баланса возбудительных/тормозных ответов, вызванных на высокочастотную стимуляцию дистального отдела поврежденного седалищного нерва.

При дегенерации аксона расстройства аксонального транспорта трафогенов и веществ, необходимых для образования и выделения медиаторов нервным окончанием, обусловливают развитие дистрофических изменений нейронов и иннервируемых тканей и нарушение синаптических процессов. С другой стороны, в спинном мозге и периферическом нерве крыс со стрептозоциновым диабетом найдены некоторые артефакты сорбита метаболического пути глюкозы [12] и показано, что периферический нерв обладает лимитированной емкостью фруктозы [9]. Развитие метаболических дисфункций регулируется многочисленными факторами, среди которых, согласно современным изучениям, центральная роль отводится повышению оксидативного повреждения и снижению оксидативной защиты [10]. Интенсивное потребление фруктозы повышает маркеры оксидативного стресса [8] и, в частности, в передних рогах серого вещества спинного мозга [11]. Вероятно, именно указанные патологические изменения в спинномозговых нейронах задерживают восстановительные процессы.

Иннервацию основной части задних конечностей обеспечивает седалищный нерв. После повреждения как моторные, так и сенсорные аксоны седалищного нерва способны регенерировать и подключаться к специфическим мишениям. Иными словами, имеет место функциональное восстановление. Важно признать, что даже при самой благоприятной среде может произойти аномальное восстановление дистальной культи. Перестановка сенсорных и моторных компонентов в нерве со смешанной функцией является всеобщим последствием травмы. Конечной причиной двигательных нарушений при травматическом повреждении выступает дегенерация нейронов [4] и потеря синапсов [14], а конечным результатом могут быть нефункциональные аксональные единицы, которые и определяют увеличение доли зарегистрированных нами ареактивных мотоней-

